

ԵՐԱԺԻՇՏ



Երևանի Կոմիտասի անվան
պետական կոնսերվատորիա

Yerevan Komitas
State Conservatory

Ереванская государственная
консерватория им.Комитаса

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (219)

#3 մարտ 2024

Արվեստագետների դիրքորոշումներն
արվեստի բուհերի միավորման
եւ Երեւանի Կոմիտասի անվան
պետական կոնսերվատորիան
ապագա ակադեմիական
փառափի մաս դարձնելու,
սեղափոխելու վերաբերյալ

2,3,4...

«... իմ դիրքորոշումն արվեստի բուհերի միավորման և
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան
ապագա ակադեմիական քաղաքի մաս դարձնելու,
սեղափոխելու վերաբերյալ»:

ՍՈՆԱ ԴՈՎԿԱՆԻՍՅԱՆ
ԵՊԿ ռեկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր գործիչ



Սոնա Դովկանյան



Արսեն Սողոմոնյան, Վաղարշակ Հարությունյան

6,10

«Դասախոսներն ուսանողների
կողքին են, մենք օրինակ պիտի
լինենք նրանց համար:
Մեզ մեր գալիք սերունդները
չեն ների»:

ՎԱՂԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՊԿ պրոֆեսոր,
վաստակավոր մանկավարժ,
դաշնակահար,
2011-2018 թթ, ուսումնական գծով պրոռեկտոր

Բոլորս, ովքեր համդես ենք գալիս ամբողջ
աշխարհի լավագույն հարթակներում, հայտնե-
լու ենք մեր բողոքը: Իշխանությունը, կառավա-
րությունը գործ է ունենալու մեզնից մեծ սկանդա-
լի հետ, որովհետև բոլորս պատվով ներկայաց-
նում ենք Հայաստանը ... Կոմիտասի անունը և
կոնսերվատորիայի անունը:

ԱՐՍԵՆ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Օպերային երգիչ, Միջազգային մրցույթների
դափնեկիր



Համակոնսերվատորիական միասնական ժողով,
Ղազարոս Սարյանի անվան օպերային ստուդիայի դահլիճ



Ստորագրահավաքը Կոնսերվատորիայի
շքամուտքի սրահում
լուսանկարը՝ Ալեն Մանուկյանի

3

11

Արվեստագետների դիրֆորոշումներն արվեստի բուհերի միավորման եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ապագա ակադեմիական ֆաղափ մաս դարձնելու, սեղափոխելու վերաբերյալ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան առանձին կարգավիճակով պահպանելու հիմնավորումները

Ամենայն հարգանքով վերաբերվելով գերատեսչական նախագծերին անհրաժեշտ եմ համարում օր առաջ հայտնել իմ դիրքորոշումն արվեստի բուհերի միավորման և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ապագա ակադեմիական քաղաքի մաս դարձնելու, տեղափոխելու վերաբերյալ: Վստահ եմ, որ այս հարցում արժե ակնհայտ լուր լինել պրոֆեսիոնալների կարծիքին, նախքան վերջնական որոշում կայացնելը:

Գտնում եմ, որ Կոնսերվատորիան այլ արվեստի բուհերի հետ միավորելն առաջ կբերի մի շարք նոր խնդիրներ: Բոլոր ժամանակներում երաժշտական կրթության հարցը եղել է Հայաստանի պետական քաղաքականության առաջնահերթությունների շարքում, և երաժշտարվեստը մշտապես պատվով է կատարել ազգային ինքնության ամենամերկայանալիներից մեկը լինելու իր առաքելությունը: Այս պատմական պահին, երբ Հայաստանի պետականության պահպանումը բոլորիս գերնպատակն է, երաժշտական մշակույթի մշակակությունը տասնապատկվում է:

1. ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՏԵՂԱՎԱՅՄԱՆ ԱՄԱՆՁՆԱԳԱՏՎՈՐՈՒՄՆԵՐԸ

1.1 Կոնսերվատորիան գտնվում է Երևանի կենտրոնում, ինչպես Փարիզի, Ժնևի, Մոսկվայի, Տալլինի, Լայպցիգի, Բեռլինի, Վիեննայի, Մյունխենի, Պրահայի, Վարշավայի, Բեռլինի, Լիոնի, Բուդապեշտի, Ամստերդամի, Յոհաննիս, Մադրիդի, Թբիլիսիի, Կոպենհագենի, Պետերբուրգի և մի շարք այլ եվրոպական առաջատար Կոնսերվատորիաները: Կոնսերվատորիայի շենքը տեղակայված է Օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և «Արամ Խաչատրյան» համերգասրահի հարևանությամբ՝ ստեղծելով Օպերա-Ֆիլհարմոնիա-երաժշտական դպրոցներ-քոլեջներ-Կամերային երաժշտության ազգային կենտրոն-երաժշտական թանգարաններ և Կոնսերվատորիա համակարգված իդեալական երաժշտական բնական կամպուս-միջավայր՝ այն, ինչին միտված են ներկայիս պետական բարեփոխումները: Տեխնիկական մասնագիտությունների համար միանգամայն ընդունելի է ուսումնառության կազմակերպումը կամպուսում, այն-ինչ մշակութային բուհերը մայրաքաղաքի մշակութային միջավայրի մաս են կազմում և այս պատճառով քաղաքաշինական նախագծերում Կոնսերվատորիան տեղակայված է փոքր կենտրոնում:

1.2 Միևնույն ժամանակ, գտնվելով փոքր կենտրոնում, Կոնսերվատորիան հեռու է փողոցի երթևեկից՝ հատվածից՝ անջատված լինելով Կոմիտասի արձանի հարակից այգով, հեռու աղմուկից: Կոնսերվատորիայի շենքի հեղինակների մտահղացմամբ ԲՈՒՀ-ն այնպես է տեղակայված, որ ներսում ընթացող երաժշտական գործիքների և երգիչների պարապմունքների ձայները չխանգարեն շրջակայքին: Սրանով լուծված է նաև մի շատ կարևոր այլ հարց, որն է՝ Կոնսերվատորիայի շենքում ուսանողների մշտապես պարապելու հնարավորությունը, որովհետև անհնարին է ուսանողների ժամեր տևող վարժանքները լսել բնակելի տարածքներում:

1.3 Կոնսերվատորիայի դիրքը հարմար է նաև այն առումով, որ ուսանողներն ու դասախոսները, մեկ փողոց անցնելով, ներգրավվում են իրենց մասնագիտության կատարողական-գործնական մասին, որպես համերգի մասնակից-երաժիշտ և կամ ունկնդիր՝ այդպիսով հետ չմնալով համերգային ակտիվ գործունեությունից:

1.4. Կոնսերվատորիան չունի այլ մասնաշենքեր, հետևաբար նաև դասախոսները և ուսանողները տեղաշարժերի հետ կապված խնդիրներ:

Չեմ ցանկանում ծանրաբեռնել ասելիքս՝ թվարկելով կոնսերվատորիական կրթության մանրամասներ, որոնք հղվել են տասնամյակների ընթացքում: Դրանց խաթարումը հաստատապես ավելորդ խոչընդոտներ է ստեղծելու երաժիշտների պրոֆեսիոնալ կայացման համար:

2. ԲՈՒՀԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

2.1 Կարևոր հանգամանք է նաև այն, որ առանձին անվանմամբ Պետական կոնսերվատորիա ունենալն ինքնին պատվաբեր է մեր երկրի համար: «Կոնսերվատորիա» անվանումը չի կրկնում որևէ բուհի անվանում: Ունենալով համալսարանական ընդգրկում, այն, այնուամենայնիվ, ոչ համալսարան է և ոչ էլ ինստիտուտ: Սա ևս երաժշտական կրթության ինքնատիպության մասին է խոսում, ինչը պատահական լինել չի կարող: Որպես առանձին համակարգ, այն գործում է առավել ճկուն, մոբիլ է և կերպարային իմաստով ամբողջական:

2.2 Արվեստի բոլոր ճյուղերն ունեն իրենց առանձնահատկությունները, և դրանց մեկ համակարգում ընդգրկելը կբերի երաժշտակատարողական արվեստի դիմագրկման, բազմաթիվ նրբություններ մեկ կենտրոնին հասցնելու և բացատրելու անհարկի երկարածությունների և դրանցից բխող նախաձեռնողականության մվագման:

3. ՎԵՐԱՆՈՐՈՂՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՓՈԽԻ ՄԵԿԱՄՐԿ

3.1 Պատերազմով և համավարակով պայմանավորված որոշ ժամանակային ձգձգումներից հետո, կոնսերվատորիայի հիմնանորոգումը մտավ գործնական փուլ: Մեր երախտագիտությունն ենք հայտնում առ այն, որ չնայած մեր երկրի շուրջ ստեղծված դժվարագույն իրավիճակի, տասնամյակներ հետաձգված հիմնանորոգումը նախաձեռնվում և իրականանում է պետական որոշմամբ ու միջոցներով:

Հիմնանորոգում և ԲՈՒՀ-ի տեղափոխություն՝ երկու իրարանբո զործընթաց... Կրել դժվարություններ և լռելյայն տեղափոխվե՞լ...

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Միջազգային հավատագրման արդյունքներով բուհը շենքային պայմանների մասով չունի միջազգային չափանիշների հետ կապված անհամապատասխանություններ:

4.2 Շենքի հնարավորություններն ու ուսանողության թվաքանակը ևս համապատասխանում են միջազգային չափանիշներին:

4.3 Կոնսերվատորիայի լսարանների առաստաղները նախագծված են բարձր, ինչը ապահովում է անհրաժեշտ ռեզոնանցիան՝ դա ևս մի առանձնահատուկ մասնագիտական նրբություն է:

4.4 Շենքի հիմնանորոգման հետ կապված խնդիրները վերաբերում են կոմունիկացիաների, օդափոխության համակարգի ներդրման, ջրահեռացման հետ կապված թերություններին, չօգտագործվող նկուղային հատվածներն օգտագործելի դարձնելու, արևի էներգիայի միջոցով խնայողության հետ, որի մասին անձամբ բարձրաձայնել եմ իմ պաշտոնավարման առաջին իսկ օրից և ստացել կառավարության կողմից դրական արձագանք՝ Կոնսերվատորիայի հիմնանորոգման ահարժեշտության հաստատում: Հիմնանորոգման արդյունքում այս բացերը կվերացվեն՝ բուհի ներկա շենքային պայմանները հասցնելով միջազգային չափանիշների, դարձնելով այն առավել գրավիչ: Հարկավոր չէ տուրք տալ կեղծ լուրերին, թե իբր հիմնանորոգվող մասնաշենքի դասասենյակներին կից առանձին լոդասենյակներ են կառուցվում՝ հետագայում շենքը հյուրանոց դարձնելու նպատակով: Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ լոդասենյակներ նախագծված չեն հիմնանորոգվող մասնաշենքում:

5. ՈՒՍՄԱՆ ՈՐԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ

5.1. Երևանի պետական կոնսերվատորիայի շրջանավարտները սպասված մասնագետներ են լավագույն միջազգային համերգային հարթակներում: Ուսումնառությունն ավարտելուն պես մեր ուսանողները աշխատում են բազմաթիվ երկրների օպերային թատրոններում, սիմֆոնիկ և կամերային նվագախմբերում, ուստի արդյունավետության ցուցանիշներով Կոնսերվատորիան մնում է բարձր դիրքերում: Այս պահին էլ մեր ուսանողները փայլում են Կոնսերվատորիայում ընթացող «Երազմուսի» ուսումնական և համերգային ծրագրերում: Ուսանողների այսպիսի արդյունքները միայն իրենց տաղանդին վերագրելը արդար չէր լինի:

5.2. Նշեն, որ օտարերկրյա ուսանողների թվով Կոնսերվատորիան, տոկոսային հարաբերությամբ, հանրապետությունում առաջատարն է:

5.3. Վերջին ուսումնասիրությունների համաձայն Կոնսերվատորիայի շրջանավարտների 80%-ն աշխատում է մասնագիտությամբ:

6. ALMA MATER-100

6.1. ԵՊԿ-ն միակ համահայկական երաժշտական բարձրագույն ուսումնական հաստատությունն է՝ երաժշտական *Alma Mater*-ը, ԵՊՀ-ից հետո հիմնարկված երկրորդ պետական բուհը: 2021 թվականին, չնայած հետպատերազմյան հոգեբանական բարդագույն շրջանի, բուհը պետական աջակցությամբ մշտել է իր 100-ամյա հոբելյանը, ինչը երաժշտական բարձրագույն կրթության նկատմամբ պետական հոգածության օրինակ է:

6.2. Կոնսերվատորիայի մասնագիտական կրթական ծրագրերը չեն կրկնում որևէ այլ բուհի կրթական ծրագրերը: Իմ պաշտոնավարման առաջին տարում միավորվել եմ միևնույն գործառնությունով աշխատող մի շարք ամբիոններ: Բուհն ունի մեր մասնագիտացումների պահանջ՝ այս պահին մշակվում է մանկավարժական մասնագիտացման՝ երաժշտական մանկավարժության ուսումնական ծրագրերի փաթեթը, որի շահառուները բացառապես մեր բուհի ուսանողներն են լինելու: Մասնագիտական որակի ապահովման տեսակետից ևս, ճիշտ չեմ համարում երաժշտակատարողական կրթության և արվեստի մյուս ճյուղերի կրթական գործընթացների միավորումը:

7. ՂԱՅՈՐՈՍ ՍՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻՆ ԱՍՈՒԴԻԱ

7.1. Կոնսերվատորիայի ամենակարևոր լաբորատորիաներից է Օպերային ստուդիան, որը հիմնական շենքի մաս է կազմում և որի ակտիվ գործունեության մասին եմ վկայում



20.06. 14 մարտ 2024
«Ամեն բանի նորը չէ, որ լավ է». Սոնա Հովհաննիսյանը Կոնսերվատորիայի տեղափոխման վերաբերյալ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր Սոնա Հովհաննիսյանը բուհի պաշտոնական էջում հրապարակել է իր դիրքորոշումը՝ անդրադառնալով Կառավարության՝ արվեստի բուհերի միավորման և դարձնելու նախագծին

https://hetq.am/hy/article/164998?fbclid=IwAR21hc7s1gkVYGSWcURGI6pGYztuluUKyftL_YdpS5QkEBqHcYlaNDDqmFL_aem_AWqXIXsMUHrKY_7p-CW8yrs-evHlsNB7gJEUw8H3nRA9nZ78A9JABBz6RQPDvYz4e--Sg29lpp41lEm0XhGT37K

ստուդիայի նորանոր պրեմիերաները: Ստուդիան հիմնադրվել է կոմպոզիտոր Ղազարոս Սարյանի (Մարտիրոս Սարյանի որդու) ջանքերով, ով շուրջ 26 տարի ղեկավարել է Կոնսերվատորիան: Անհավանական է, բայց՝ փաստ, որ դժվարագույն պայմաններում իրականացնում է օպերային ժանրի այլընտրանքային մի հարթակ՝ հաղթահարելով ժանրի ամբողջ արտադրական պրոցեսի խնդիրները՝ ղեկորներ, հանդերձանք, պրոյեկցիաներ: Օպերային ստուդիայի բոլոր նախաձեռնություններին ներկա են եղել և աջակցել են նոր սերնդի հայ աշխարհահռչակ մշակութային գործիչներ՝ թավջութակահար Նարեկ Հախնազարյանը, ջութակահար Սերգեյ խաչատրյանը, նկարիչ Տիգրան Զիթողյանը: Ստուդիայի աշխատանքներին մշտապես աջակցել են ՀԱՖՆ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանն ու նվագախմբի առաջատար երաժիշտները: Ստուդիայի գեղարվեստական ղեկավարն է ՀՀ ժողովրդական արտիստուհի Հասմիկ Պապյանը: Ստուդիան իր շուրջն է համախմբել նաև արտերկրում բնակվող մի շարք գործիչների: Այս թանկարժեք ծրագրերն իրականանում են արտակոնսերվատորիական ներդրումների հաշվին՝ գեղարվեստական ղեկավարի նվիրման և ջանքերի շնորհիվ: Մասնակիցներն ու ղեկավարությունն իրագործում են այս ամենն անշահախնդրորեն: Իրականացվել են երեք բարդագույն օպերաների պրեմիերաներ և մի շարք թեմատիկ համերգներ:

8. ԵՊԿ-Ի ՖՈՆԴԵՐՆ ԻՐԲԵՎ ՈՐՀ ԵՐԱՇՏՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒՆ

8.1. ԵՊԿ-ի հարստության մաս են կազմում Կոնսերվատորիայի գրադարանը, ծայնադարանն ու ֆուլկլորագիտության ֆոնդերը, որոնք սպասարկում են ոչ միայն Կոնսերվատորիային, այլև երաժշտական ողջ համակարգը՝ ներառյալ երաժշտական ու արվեստի դպրոցները, քոլեջները, թանգարանները: Խաթարման վտանգի կբերվեն նաև այս երկարամյա համակարգված կապերը, երաժշտական օղակների հետ առնչությունները:

9. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՉԵՂԱՐԿՄԱՆ ԿՏԱՆԳ

9.1. Մանկավարժական, կատարողական և գիտամանկավարժական (բալետավարժիկատ և մագիստրատուրա) պրակտիկան մեր ուսանողներն անցկացնում են արտագնա ձևաչափով՝ շենքի մոտակայքում գտնվող մասնագիտացված ստուդիաներում, դպրոցներում և քոլեջներում, որոնց հետ գործնական կապեր են հաստատված: Կոնսերվատորիայի տեղափոխման պահից այս ձևաչափը հարկադրաբար կկասեցվի՝ վտանգելով մեր բուհի միջազգային չափանիշներին համապատասխանեցման կարևոր գործընթացը:

10. ՀԱՅՆԱԳՐՄԱՆ ԱՍՈՒԴԻԱ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

10.1. Վերջին տարիներին Կոնսերվատորիայում ընթանում են նաև ծայնագրման ստուդիա-լաբորատորիայի ակտիվ աշխատանքներ: Բուհի բազմաթիվ միջոցառումները սպասարկելուց բացի, այն յուրաքանչյուր ուսումնական տարեկանից թողարկում է Կոնսերվատորիայի լավագույն շրջանավարտների կատարումներն ընդգրկող ծայնասկավառակներ: Միայն այս տարի թողարկվել է ներբուհական մրցույթների հաղթողների երեք ծայնասկավառակ:

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆՔ ապագա կամպուսում ստեղծել երաժշտության առանձին ֆակուլտետ, որին պատրաստ ենք աջակցել: Հուսանք, որ այն կդառնա մրցակցային-այլընտրանքային երաժշտական և մեկ կրթական հնարավորություն, կլինի գրավիչ, նախընտրելի և կապացուցի իր առավելությունները:



Արվեստագետների գիրքորոշումներն արվեստի բուհերի միավորման եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ապագա ակադեմիական ֆաղափ մաս դարձնելու, սեղափոխելու վերաբերյալ

ԵՊԿ ողջ անձնակազմն իր անհամաձայնությունն է հայտնել մարտի 12-ին կայացած կոնսերվատորիական ընդհանուր ժողովի ժամանակ՝ հարյուրամյա ԲՈՒՀ-ը ֆակուլտետ դարձնելու, իր միջավայրից կտրելու և ակադեմիական քաղաքում ուսումնառությունը կազմակերպելու ծրագրին: Միջավայրը ձևավորվում է երկարամյա աշխատանքի և սերունդների հերթափոխման, մի շարք արժեհամակարգային կուտակումների արդյունքում, ինչի հետ հարկավոր է հաշվի նստել:

Երբ բուհի առջև ծառացած մի շարք խնդիրներ հրատապ լուծումներ են պահանջում, ֆիզիկապես բուհի այլ տարածք տեղափոխությունն ու այլ բուհի հետ միավորումն ուղղակի շրայություն կարելի է համարել:

Բուհն ունի.
- երաժշտական գործիքների ձեռքբերման անհրաժեշտություն, ինչի ուղղությամբ արված է և արվում է մեծ աշխատանք:

- Աշխատավարձերի բարձրացման հետ կապված պահանջվում են անհետաձգելի լուծումներ:

Վերջին կետի հետ կապված, կարծում եմ, անհրաժեշտ են հավելյալ պարզաբանումներ:

Բանն այն է, որ կրթական համակարգի մաս լինելով հանդերձ, Կոնսերվատորիան աշխատում է բոլոր բուհերից տարբերվող ձևով՝ յուրաքանչյուր ուսանողի հետ անհատապես: Սա է պատճառը, որ մեկ ուսանող - մեկ դասախոս ֆինանսավորումը չնչին է՝ ի տարբերություն այլ բուհերի մեկ կուրս - մեկ դասախոս ֆինանսական հարաբերակ-



ցության: Իրականում սա բանկ կրթություն է, որը որևէ եզր չունի միջազգային երաժշտական կրթության պետական և մասնավոր վարձատրության չափի հետ: Եվրոպական կոնսերվատորիաների վարձավճարը կազմում է տարեկան 30 000- 40 000 եվրո, մասնավոր ժամի արժեքն սկսվում է ժամում 50 եվրոյից: Մեր բուհի նկատմամբ պահանջները միջազգային են, աշխատավարձերը՝ անհամեմատելի. ժամի արժեքը՝ մոտ 2-3 դոլարին համարժեք դրամ է կազմում: Խորհրդային շրջանում Կոնսերվատորիայի դասախոսը բուհական համակարգի ամենաբարձր վարձատրվողներից էր: Արվեստի բուհերի միավորումը չի կարող որակապես դրական կերպով ազդել կոնսերվատորիական կրթության արդյունավետության վրա: Այլ բուհերի համեմատ մի քանի անգամ ցածր աշխատավարձի պայմաններում աշխատող պրոֆեսորադոսսական անձնակազմն ապահովում է հանրապետական երաժշտապրոֆեսիոնալ կադրերի պահանջարկն ու ամենաբարձր կարգի բեմահարթակներում և մրցույթներում մեր շրջանավարտների ներկայացվածությունը: Տեխնոլոգիաները, թվայնացման նորագույն նվաճումներն ու արհեստական ինտելեկտը դեռևս չեն ստեղծել հին վարպետներ՝ Ստրադինիի, Գվարներիի որակի և կատարելության գործիքներ: Այսօր էլ հնագույն ջութակը մնում է անգերազանցելի, և այն ձեռքն առնելը լրջագույն վաստակ է պահանջում: Սա մեր ոլորտի առեղծվածներից է: Ամեն բանի նորը չէ, որ լավ է՝ որքան էլ պարահոգալի հնչի: Հարմոնիայի դասընթացի կարևորագույն օրենքն ասում է՝ հարմոնիայի խնդիրը ճիշտ է լուծված, բայց երաժշտականորեն՝ վատ: Ինչպե՞ս բացատրել սա ոլորտից հեռու մարդկանց, չգիտեն, քանի որ ակադեմիական երաժշտությունն իր օրենքներն ու բանաձևերն ունի: Օրական 8-10 ժամ պարապող ուսանողի և առավուտից մինչև ուշ երեկո Կոնսերվատորիայում գտնվող դասախոսի ծանրաբեռնվածությունը պետականորեն վերտավազմակերպելու կարիք ամենևին չկա: Համավարակի ծանր շրջանն ուղղակի ոլորեցություն էր Կոնսերվատորիայի համար:

Արվեստի միակ անբեկանելի չափանիշը մնում է անզուգականությունը, անհատականությունը՝ ԱՆՆՄԱՆԸ: Տաղանդը խելացի է: Այսպես են մտածում մեր ոլորտի բազմաթիվ տաղանդավորներ: Ականջալուր լինենք նրանց և միայն կշահենք:

Չպետք է թույլ տալ, որ խառնակ ժամանակների հորձանուտը կլանի նուրբ աշխարհների հմայքը:

ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ԵՊԿ ղեկավար, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր գործիչ

СВЕТЛАНА
КОРЮНОВНА САРКИСЯН
доктор искусствоведения,
профессор ЕГК им. Комитаса,
заслуженный деятель
культуры Армении и Польши
(ПНР), обладатель Золотой
медали Государственного
комитета по науке
Республики Армения



КОНСЕРВАТОРИЯ: ФУНКЦИЯ, СТРУКТУРА, СОЦИАЛЬНЫЙ КОНТЕКСТ

1. ФУНКЦИЯ

Консерватория как высшее учебное музыкальное заведение представляет собой третий, завершающий этап подготовки профессиональных музыкальных кадров. Предшествующие два — детское и юношеское (Детская музыкальная школа и Музыкальный колледж) — в процессе общего процесса музыкального образования рассматриваются как необходимые этапы приобретения необходимых знаний, обеспечивающих профессиональное становление и развитие творческой личности. В связи с этим этапы являются не только продолжением, но дополнением, усложнением и обогащением приобретенных знаний и технических навыков молодого музыканта. Учеба в Детской музыкальной школе, а затем в Музыкальном колледже призвана формировать фундамент для дальнейшего развития и совершенствования. Поэтому, несмотря на выбор разных специализаций, имеющих индивидуальную специфику овладения знаниями и техническими навыками, на обоих этапах необходимым условием становится выработка общего, скоординированного процесса обучения. Данный процесс подразумевает, во-первых, движение от простых, но основополагающих факторов для фундамента музыкального обучения к сложным техническим навыкам и музыкально-теоретическим понятиям. Во-вторых, весь процесс логически направлен на качественное расширение полученного опыта, углубление всей системы уже освоенных знаний и технических навыков.

Несмотря на длительный период обучения на двух этапах, по времени соответствующих учебе в общеобразовательных школах, молодой человек — вне зависимости от избранной специализации — еще не готов к статусу профессионального музыканта (артиста). Во многом это определено и возрастным фактором: личность, как правило, формируется после достижения совершеннолетия, что совпадает с третьим этапом подготовки профессиональных музыкальных кадров — Высшим учебным музыкальным заведением. В исторической практике последних столетий музыкальное Высшее учебное заведение подразумевает Консерваторию или Высшую музыкальную школу, или Академию музыки (в ряде стран она организована как Академия музыки и театра либо Академия музыки и танца). Во всех случаях основной функцией музыкального ВУЗа прежде всего является совершенствование, то есть окончательная шлифовка исполнительского искусства студентов. Исполнительские навыки, полученные на предшествующих этапах, на консерваторском этапе приобретают желаемую академическую форму. Вне этого, последнего этапа категория музыканта-исполнителя не может квалифицироваться на статусе профессионального артиста. Не случайно, что даже талантливые молодые люди, уже имеющие самостоятельную концертную практику, считают необходимым получить высшее музыкальное образование. Именно в таком случае можно судить о значении и качестве предшествующего обучения — как на первом, так и на втором этапах. Единая цепь музыкального образования, завершающегося на этапе консерваторского обучения, красноречиво свидетельствует о длительности и трудоемкости пути музыканта в области исполнительского искусства, что сопоставимо с каким-либо другим видом искусства.

2. СТРУКТУРА

Структура Высшего учебного музыкального вуза (Консерватории) определена его многопрофильным характером. Здесь получают образование музыканты разных про-

фессий. Это пианисты (специализация: фортепиано, орган, клавесин), струнники (специализация: скрипка, альт, виолончель, контрабас), духовики (специализация: деревянно-духовые инструменты — флейта, гобой, кларнет, фагот, саксофон, и медно-духовые инструменты — валторна, труба, тромбон, туба), ударники (арфа и все разновидности многочисленных ударных инструментов), вокалисты (камерное и оперное пение), дирижеры (хоровое дирижирование и симфоническое дирижирование), музыковеды (специализация: история музыки, теория музыки, народное творчество, медиавистика, педагогика, журналистика), композиторы, а также исполнители на народных инструментах (духовых и струнных), музыканты джаза и поп-культуры. Исходя из многопрофильного характера структура музыкального вуза предполагает укрупненные отделения (деканаты) и кафедры, классификация которых в каждом из вузов может быть индивидуальной. (Так, в Ереванской государственной консерватории имени Комитаса действуют 19 кафедр.) Однако независимо от внутренней структуры, во всех музыкальных вузах мира действует фундаментальный принцип координации между кафедрами, обеспечивающий необходимую многосторонность образования, а также соподчиненность разных музыкальных специализаций. К примеру, пианист специализируется не только в искусстве игры на фортепиано, но также обязательно приобретает навыки ансамблевого исполнителя (со струнниками, духовиками, вокалистами) и концертмейстера (все специальности, включая оперную подготовку певца, и работу с хором). Исключение одного из звеньев многопрофильного обучения, то есть интегральной внутренней структуры, влечет за собой изменение основной функции любого музыкального вуза (будь то Консерватория или Музыкальная академия).

Одновременно с этим учебный процесс музыкального вуза не замыкается на развитии только индивидуальных способностей студента. Отражением его профессиональных навыков становится создание самостоятельных музыкальных коллективов — инструментальных и вокальных ансамблей, камерного и симфонического оркестров, хорового коллектива, Оперной студии. В разные периоды истории Ереванской государственной консерватории имени Комитаса получили самостоятельную жизнь различные ансамбли, в том числе Струнный квартет, Духовой квинтет, Камерный оркестр, Ансамбль ударных инструментов. В настоящее время действуют Камерный хор консерватории, Симфонический оркестр консерватории, а также Оперная студия консерватории. Их деятельность, особенно Оперной студии, выходит за пределы консерваторских стен, становится самостоятельной площадкой для реализации оперных и синтетических оперно-балетных проектов.

Наконец, результаты деятельности любого музыкального вуза подтверждаются функционированием самостоятельного издательского отделения. На базе Ереванской государственной консерватории имени Комитаса свыше двух десятилетий действует «Издательство ЕГК», осуществляющее выпуск республиканской газеты «Музыкант», международного научно-критического журнала «Музыкальная Армения», а также научно-методической и нотной литературы.

3. СОЦИАЛЬНЫЙ КОНТЕКСТ

Отмеченные этапы музыкального образования, именно благодаря третьему этапу (соответственно, Консерватория) получившие наиболее совершенный результат в подготовке музыканта высшей профессиональной категории, направлены на возможность его дальнейшей музыкальной практики в разных институциях, причем, не исключая театральные, кинематографические, балетные и пр.

Многопрофильная вузовская подготовка музыканта-исполнителя дает возможность постоянного моделирования его творческой активности, а также совмещения разных форм деятельности. Более того, будучи подготовленным для работы в области музыкальной культуры, музыкант — единственный специалист всех художественно-творческих профессий, может найти применение своей профессиональной подготовки в других областях искусства и культуры, в том числе в современных формациях научно-технологического синтеза. Этому во многом способствует универсальный характер консерваторского образования музыканта, свободно адаптирующегося к вызовам современности и, одновременно с этим, воспринимающего историю и традицию в контексте меняющейся современности.

СВЕТЛАНА САРКИСЯН
доктор искусствоведения, профессор кафедры теории
музыки Ереванской государственной консерватории им.
Комитаса, заслуженный деятель культуры Армении,
заслуженный деятель польской культуры (ПНР), обладатель
Золотой медали Государственного комитета по науке
Республики Армения



Արվեստագետների դիրիորշումներն արվեստի բուհերի միավորման եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ապագա ակադեմիական փառափ մաս դարձնելու, փոփոխելու վերաբերյալ

ունենանք բուհ, բայց եթե այդքան ռեսուրս չունենք, որակի ապահովման գործում էլ լուրջ խնդիր կա մայր բուհից սկսած, այդքան բուհերի իմաստը ո՞րն է»:

Aravot.am-ի դիտարկմանը, որ մեր բոլոր բուհերը միասին վերցրած՝ շուրջ 70 հազար ուսանող ունեն, դա համարժեք է դրսի ընդամենը մեկ խոշոր բուհի ուսանողների թվին, ուրեմն ի՞նչ «Ակադեմիական քաղաքի» մասին կարող է խոսք լինել, հատկապես որ Երեւանի կենտրոնում տեղակայված բուհերն արդեն իսկ ակադեմիական քաղաքի, ակադեմիական թաղամասի տրամաբանությամբ են գործում, Վահրամ Դումանյանն արձագանքում է.

«Ակադեմիական քաղաքը մի պատկերացրեք մի քանի հարյուր հազար բնակչությամբ մեգապոլիս, քաղաք, չնայած ուսանողներ, դասախոսներ, ենթակառուցվածքներ... արդեն իսկ մի քանի տասնյակ հազար մարդկանց մասին է խոսքը: Երևի ճիշտ կլինի ասել համալսարանական թաղամաս կամ ավան: Ուղղակի նախագծի պաշտոնական անունն է «Ակադեմիական քաղաք»: Նույն Օբսֆորդը, Քեմբրիջը, հեռու են Լոնդոնից, բայց դա չի նշանակում, որ Լոնդոնում բուհեր չկան: «Ակադեմիական քաղաքը» պետք է նպաստի եղածին, դրան պետք է նայել որպես ընդլայնման լրացուցիչ հնարավորություն, որոշ դեպքերում էլ կից բուհերով: Գուցե բուհեր լինեն, որ ամբողջությամբ այնտեղ կտեղափոխվեն»:

Վահրամ Դումանյանին ճշտող հարց տվեցինք: Դուք կարծում եք, որ որոշ բոլորի պատմական շենքերը պե՞տք է մնան բուհական տարածքներ և գործեն Երևանում, բայց դրանք մասնաճյուղեր, ֆակուլտետներ՝ ունենան «Ակադեմիական քաղաքում»:

«Իհարկե, ճիշտ հասկացաք... Մասնավորապես երկու բուհ ունենք, որոնք հարյուրամյակի պատմություն ունեն՝ ԵՊՀ-ի և Բժշկական համալսարանի հիմնական շենքերը»:

Մեր զրույցի ժամանակ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիային էլ անդրադարձ եղավ:

«Իմ ԿԳՄՍ նախարար եղած ժամանակ կոնցեսյա ենք ներկայացրել՝ արվեստի բուհերի խոշորացման հետ կապված: Կոնսերվատորիայի պարագայում, անկեղծ ասած, երկու լուծումն էլ մտածելու տեղիք են տալիս, պետք էր որոշում կայացնել, բայց չհասանք այդ որոշմանը: Միավորման տրամաբանությունն էլ էինք հասկանում, չմիավորվելունն էլ: Դա պետք է լայն և լուրջ քննարկում անցնի, ընդ որում՝ պրոֆեսիոնալ դաշտում: Կան հարցեր, որոնց ստիպողական լուծումը լավ բանի չի բերի, կոնսերվատորիան այդ առումով եզակիության կետ է: Տեսեք, Պոլիտեխնիկն էլ է պատմական, բայց եթե գնում ենք տեխնոլոգիական բուհի գաղափարին, տեխնոլոգիական բուհը ենթադրում է լուրջ տեխնոլոգիական բազա, ինչն այսօրվա պոլիտեխնիկի շրջակայքում դժվար է պատկերացնելը: Նույնն էլ այսօրվա Գյուղատնտեսական ակադեմիային է վերաբերում: Այսօր հնարավոր չէ ստանալ լիարժեք գյուղատնտեսական կրթություն միայն լսարանում, պետք է ունենալ բազաներ, արտավայրեր, ֆերմաներ, տեխնիկա, ու լավ կլինի, որ լսարանը հեռու չլինի այդ ամենից, լսարանից պետք է հեշտությամբ տեղափոխվել տեխնոլոգիաների մոտ, ոչ թե զալ Աբովյան պուրակում դաս անել, հետո գնալ Բալահովիտ կամ Արմավիրի մարզի ինչ-որ դաշտ: Ֆունդամենտալ կրթության համար ներշնչող միջավայրը կարևոր է, օրինակ՝ մանկավարժական համալսարանի հիմնական մասնաշենքի շուրջ քանդակապետ սլացող մեքենաներ են, ծայրային ազդանշաններ... Դա բուհական միջավայր չէ...», -ասաց Վահրամ Դումանյանը:

ԳՈՐԱՐ ՀԱԿՈՔՅԱՆ
«Առավոտ» օրաթերթի լրագրող

https://www.aravot.am/2024/04/15/1412372/?fbclid=IwZXh0bgNhZW0CMTEAAR3cHJoUnlkRU59ymod-KdVcrhUP8hU9Gaugw-ITfIqy_xl3DttfZpDBLO_aem_ATkRcDR-4tYN9nAnpCObrMbO7XoqUe6sNMp_vzO_EDSku_vFHwPhYtGN9z0qF8P_xFrtfIPNw6k619m8HKAH59yx

«Դասախոսներն ուսանողների կողքին են, մենք օրինակ պիտի լինենք նրանց համար»
«Մեզ մեր գալիք սերունդները չեն մերի».
Վաղարշակ Հարությունյան

Մենք գործում ենք այնպիսի բուհում որը պահպանվում է լինել համախմբված և որը պետք է նպաստի ուսանողի կայուն և բազմակողմանի զարգացմանը թե միջավայրի առումով թե՛ թե՛ արվեստային ու հայրենասեր սերունդ դաստիարակելու: Եվ հենց այդպիսին է մեր կոնսերվատորիան մրադասված թե՛ շինության, թե՛ փոխանակի, ինչպես որ ընդունված է եվրոպական երկրներում, որի արժեքային համակարգի կրողն ենք և մենք՝ հայերնու: Ուստի պարտավոր ենք պահպանել և չկորցնել հազարամյակներից դարերից եկող մեր մշակութային արժեքները:



Վաղարշակ Հարությունյան

ԵՊԿ պրոֆեսոր, վաստակավոր մանկավարժ, դաշնակահար, 2011-2018 թթ, ուսումնական գծով պրոռեկտոր՝ Վաղարշակ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Երևան, ՀՀ)
Դիրիոր, Լոնգ Սյոն կոնսերվատորիայի պրոֆեսոր Վարդան ՀԱՎՈՐՅԱՆ (Նյու-Յորք, ԱՄՆ)
զրույցից մեջբերում
<https://www.youtube.com/watch?v=TsINt-mg33Y>




Էմմա Պետրոսյան

ին: Այդպես հեշտությամբ փակել այդ էջը ու գնալ մոտ կառուցված ինչ-որ մի տեղ, ես դա չեմ պատկերացնում»:

ԷՄՍԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԵՊԿ դասախոս,

ՀՀ վաստակավոր արտիստ, երգչուհի
Աղբյուրը՝ <https://www.iravunk.com/?p=279158&l=am>

Հարցազրույցից մեջբերում



Արթուր Շահնազարյան և Վարդան Հակոբյան

«Ես կտրականապես դեմ եմ այդ քայլին, դա պարզապես արկածախնդրություն է: Կոնսերվատորիային ինչ է եղել, որ ուզում են միավորել ինչ-որ բանի հետ: Տարիներ շարունակ աշխատել է, ինչու համկարծ այսօր որոշեցին միավորել, ինչո՞ւ այդ քայլը չէին անում 30-50 տարի առաջ: Կոնսերվատորիան սպեցիֆիկ հաստատություն է, այնտեղ ամեն ինչ անհատական է: Չեն կարող այդ ամենը կազմակերպել մեկ ուրիշ տեղում: Այդ շենքում ամեն ինչ մտածված է հատուկ կոնսերվատորիայի համար: Այստեղ ամեն ինչ հաշվարկված է: Ու համեմատելով այդ ամբողջը, տալիս ինչ-որ մեկ այլ վայր ու զրույցի սարքել չի կարող մնալ բան լինել: Մի խոսքով՝ սա հիմարություն է և նշանակում է կոնսերվատորիայի գլխին փորձանք բերել, վերացնել: Կոնսերվատորիա չի լինի, կլինի երաժշտական ինչ-որ ֆակուլտետ: Դրսում այդպիսի բաներ կան, երևի մերոնք չփորել են: Դա կոնսերվատորիա չէ, ես հանդիպել եմ այդտեղի ուսանողների հետ ու ծիծաղել եմ: Նույնիսկ մեր երաժշտական դպրոցների 7-

րդ դասարանի երեխաների ունակությունները չունենին:

Մեր Կոնսերվատորիան գերմանական է (ի նկատի ունի համակարգը, որը ներդրվել է կրթության հիմքում, - **խմբ.**), սովետական տարիներին եմ մեր երկրին մղել տվել, այն դեպքում, երբ Արևմուտքի երկրները նույնիսկ չունեին: Այդպիսի պատրաստի կոնսերվատորիա եմ մեզ տվել: Հնարավոր է այսօրվա կոնսերվատորիան չունի առաջվա մակարդակը, բայց այն քանդելը հիմարություն է: Այսօր այնտեղից հզոր ջութակահարներ, դաշնակահարներ, երաժիշտներ են դուրս գալիս: Չգիտեմ, թե միտումը որն է: Երևի իրենց շենքն է պետք»:

ԱՐԹՈՒՐ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Կոմպոզիտոր, կոմիտասագետ

հարցազրույցից այս հատվածը գտնելվել է

Կոնսերվատորիայի միասնական շարժում էջում

<https://www.facebook.com/photo/?fbid=122130876866239664&set=pb.61557189935724.-2207520000>



Անահիտ
Բաղդասարյան

«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան մեր երաժշտության Մայր Աթոռն է: Այն լույս է սփռում ոչ միայն Հայաստանի, այլ ամբողջ հայ իրականության վրա: Եւ դա վերաբերում է ոչ միայն մեր ներկային, այլ բոլոր ժամանակներին: Կոնսերվատորիան իր տեսակի մեջ միակն է և եզակի է մեր հազարամյա պատմության մեջ: Սա մեր երաժշտության հոգևոր տաճարն է»:

ԱՆԱՀԻՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱՍ Արվեստի ինստիտուտի ժողովրդական

երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, ԵՊԿ Հայ

երաժշտական ֆուլկլորագիտության

ամբիոնի դասախոս, արվեստագիտության

թեկնածու, դոցենտ

<https://www.facebook.com/profile.php?id=61557189935724>

Վերջին շրջանում և հատկապես վերջին օրերին ակտիվացել են տեսակետները, թե Եկեղեցին և Եկեղեցականները քաղաքականությամբ չպետք է զբաղվեն: Այս տեսակետը հավանաբար արտացոլանքն է եվրոպական քաղաքական մտքի վերջին երկու հարյուր տարվա պատմության: Ավելի կոնկրետ, Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո և նապոլեոնյան արշավանքների հետևանքով Եվրոպայում վերջնականապես բյուրեղացավ ազգ-պետություն կամ ազգային պետություն հասկացությունը (սկսել էր ձևավորվել շատ ավելի վաղ): Այդ գաղափարի անքակտելի հատկանիշ է նաև պետության աշխարհիկ բնույթը:

Ավհայտ է, որ այսօր մեզանում ազգ-պետություն գաղափարը գոնե որոշակի շրջանակներում համարվում է հնացած, ավելին, առաջ են մղվում պոստմոդեռնիստական գաղափարներ, որոնց համատեքստում ազգն ու ազգայինը հիմնիվոր վերափոխված են: Բավարար է միայն հիշեցնել, որ մեր պետության եթնիկ միատարրությունը լուրջ անհանգստություն է պատճառում շատ շատերին, այդ թվում և երկրի ներսում: Եվ ցանկություն կա հավանաբար դեմոգրաֆիկ փոփոխությունների արդյունքում անցնելու քաղաքական կոնստրուկտիվիզմի, որի համատեքստում ազգը բոլորովին այլ բան է: Ստացվում է, որ ազգ-պետություն մոդելի մեզ համար այնքան նախընտրելի չափ հատկանիշներ մարզինալացվում են, իսկ աշխարհիկ բնույթն ընտրողաբար ֆետիշացվում:

Զօմարանալով քաղաքագիտական և ինձ համար ոչ մասնագիտական հարցերի վրա՝ ամփոփեմք, որ եվրոպական ազգ-պետություն հասկացությունն իր աշխարհիկ բնույթով հանդերձ, մարզինալացված է հենց այն անձանց կողմից, ովքեր դավանում են շատ մոդայիկ, նորարարական, քաղաքական գաղափարախոսություններ:

Հետևապես, մնում է անդրադառնալ մեր պատմական փորձին, այն պատմական իրողություններին, որոնց համաձայն, մեր միջնադարյան ավանդույթով Եկեղեցին պետության քաղաքական համակարգի մաս էր, ուրեմն և քաղաքական էր: Պատմական ընդարձակ փուլերում Եկեղեցին ստիպված էր լինել միակ քաղաքական առաջնորդը, ուրեմն և քաղաքական էր: Այս փաստն անստեղծ կամ տգիտություն է կամ դիտավորություն:

Սակայն այդուհանդերձ, չօմարանալով թեմայի շուրջ, բազմաթիվ օրինակներից ընդամենը մի քանիսը կուզեի վկայակոչել, որ մեր օրերի համար ուսուցողական են:

Արվեստագետների դիրիորշումներն արվեստի բուհերի միավորման եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ապագա ակադեմիական ֆաղափ մաս դարձնելու, փրկելու վերաբերյալ



Մեծ Նախկին

V դարի սկզբին, երբ հայոց պետականությունն ինչ-ինչ պատրվակներով մեր քաղաքական վերնախավի կողմից (նախարարների) հանձնվեց պարսից տերությանը, միակ անձը, որ քաղաքական դիմադրություն ցույց տվեց Ա. Սահակ Ա Պարթևն էր: Եղավ ավելին. նույն քաղաքական վերնախավը հանձնեց նաև Ա. Սահակին: Ուրեմն



Վերջապես, փայլուն ձևակերպում կա այսօր մեզանում այդքան պրոպագանդիզմ թուրքիայի հետ հարաբերությունների համար, որի հեղինակը Հայ Եկեղեցու XX դարասկզբի ամենափառավոր հիերարխներից մեկն է: Մաղաքի արքեպիսկոպոս Օրմանյանն ասում է, որ թուրքերի հետ պետք է լինել ճկուն, ինչպես ակրոբատ մարմնամարզիկը և հնարամիտ ու համարձակ, ինչպես կենդանավարժը: Ինքն իր պատրիարքության շրջանի քաղաքականությունն այսպես է բնորոշել՝ «գազանագուսպ և լարախաղաց»: Հատուկ շեշտեմք, որ Օրմանյանը թուրքական իշխանությունների հետ ամենահաջող քաղաքականություն վարած պատրիարքներից է: Ուրեմն պետք է հիշել՝ նախ գազանագուսպ, հետո լարախաղաց: Եթե հանկարծ ցանկություն առաջանա մանիպուլյացիայի ենթարկել «լարախաղաց» բառը, ապա անպայման հիշեք «գազանագուսպ» բառի ուղիղ իմաստը:

Մասնագիտական շրջանակներից դուրս ցավոք մեր այսօրվա իրականության մեջ այս քաղաքական ժառանգությունը ոչ ուսումնասիրվում է և ոչ էլ գիտակցվում: Իսկ հոգևորականները, չգիտես ինչու, պարզվում է իրավունք չունեն քաղաքականությամբ զբաղվելու:

Չարմանալի օրինաչափություն կա, բոլոր այս դեպքերում և բազում չնվաճներում, երբ Եկեղեցին ստիպված է եղել քաղաքականապես առաջնորդել մեզ, հայոց պետականությունը կամ անկումային վիճակում էր կամ չկար: Սա է, որ այսօր չըզոք է ներկայացվում. իբր Եկեղեցին խանգարել է պետություն ունենալուն: Այնինչ սա ախտանիշ է. եթե Եկեղեցին ստիպված սկսում է զբաղվել քաղաքականությամբ, ուրեմն պետությունը հիվանդ է:

ՄԶԵՐ ՆԱԿՈՅԱՆ
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր,
ԵՊԿ պրոֆեսոր
<https://www.facebook.com/photo/?fbid=122132436062239664&set=a.122104448474239664>

ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ
ՇԱՐԺՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

փաստ է, որ Արշակունյաց թագավորության անկման ճանապարհին միակ քաղաքական անձը, որ հանուն պետության ընդվզեց և աքսոր գնաց, Հայոց Կաթողիկոսն էր: Աշխարհաքաղաքական թնջուկներ լուծելու տեսանկյունից խիստ ուսանելի է VIII դարի սկզբին Ա. Յովհաննես Գ Օձնեցու ՔԱՂԱՔԱԿԱՆ ժառանգությունը, որ հավանաբար կարող էր սովորեցնել այսօր՝ ինչպես կողմնորոշվել քաղաքական երկու բևեռների միջև (իր ժամանակին՝ Բյուզանդիա և Արաբական խալիֆաթ) և հիմքեր ստեղծել պետականության վերականգնման համար արդեն Բագրատունյաց հարստության:

Նույնակարգ պատմական նվաճում կարելի է համարել Ա. Ներսես Դ Կլայեցի (Շնորհալի) կաթողիկոսի ՔԱՂԱՔԱԿԱՆ ժառանգությունը, որ դարձյալ կարող էր ուսանելի լինել այն համարձակ, նուրբ ու բարձրագույն վարպետության տեսանկյունից, որով նա հայկական աշխարհի քաղաքական շահերը ներկայացնում և առաջնորդությունն իրականացնում էր մի կողմից տարասեռ և բազմաշերտ Մերձավոր Արևելքի, մյուս կողմից Բյուզանդիայի և լատինական աշխարհի միջև: Ներազգային քաղաքական խնդիրներն էլ դեռ չենք հաշվում:

Նոր ժամանակներում մեր այսօրվա հարևանների հետ առնչակցված է Սիմեոն Ա Երևանցու քաղաքական գործունեությունը, որ ցույց է տալիս, թե ինչպես պետք է վարվել կոլկասյան թաթարների հետ և ինչպես հարաբերվել Պարսից պետականության հետ:

«Ակադեմքաղաք» ծրագրի այսրոպեական քաղաքական և 10 քողարկված նպատակները. Արմեն Այվազյան

ՀՀ-ում Ակադեմիական քաղաքի հիմնումն օտար, թշնամական ծրագիր է, որի իրական նպատակներից ստորև նշում եմ միայն 10 հիմնականը: 1. Տարիներով խաթարել հայկական ԲՈՒՀ-երի բնականոն գործունեությունը՝ հետագայում ընդմիջտ բացառելով Հայաստանում որակյալ կրթություն ստանալու հնարավորությունը: 2. Մոռացության տալ բարձրագույն կրթության հայկական օջախների նախորդ նվաճումները, ջնջել նրանց պատերի ներքո գործած գիտության ու մշակույթի մեծ գործիչների մասին իմաստ-տուցիոնալ հիշողությունը, արմատախիլ անել ԲՈՒՀ-երի տեղայնացված մշակութային ավանդույթները: 3. Խզել հայ ուսանողության կապը ավագ սերնդի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ՝ հասցնելով կրթության որակին ուժգին հարված: 4. Հեռու պահել հայ ուսանողությանը մայրաքաղաքում ծավալվող քաղաքական գործընթացներից՝ այդպիսով առավելագույնս ապաքաղաքականացնելով և հեշտությամբ վերահսկելով հայ երիտասարդության այդ սերունդային հատվածը: 5. Կորել երևանաբնակ ուսանողներին իրենց ընտանիքներից, ստեղծված «նպաստավոր պայմաններում» բոլոր հայ ուսանողներին դուրսընթաց օտար բարձր երևարկել: 6. Հեռացնել հայ ուսանողությանն ու պրոֆեսորադասախոսական անձնակազմին մայրաքաղաքային գիտական ու մշակութային կյանքից՝ նաև այդպես նվազեցնելով ուսուցման գիտակրթական մակարդակը: 7. Առնվազն մասամբ հայաթափել Հայաստանի մայրաքաղաքի սիրտը՝ Երևանի կենտրոնը, ապա այն հանձնել օտարներին: 8. Խեղել Երևանի կենտրոնի թամամյանական ամբողջ դիմագիծը՝ նախկին ԲՈՒՀ-երի շենքերը քանդելով ու նրանց փոխարեն ազգային ճարտարապետության հետ աղերս չունեցող այլանդակ երկմաքերի կառուցել: 9. Ապամշակութացնել, մտավորապես զավառամտացնել, ծեղացնել և առավելագույնս հայազերծել Երևանը: 10. Բռնագաղթեցնել հայ ուսանողությանը, թշնամու համար դուրսին թիրախ դարձնել, ապա հարմար պահին մեկ հարվածով ոչնչացնել Հայաստանի այդ սերունդը: Հնարավոր է, սակայն, որ ժողովրդի դիմադրության շնորհիվ Ակադեմքաղաքն այդպես էլ չի կառուցվի ու կմնա թղթի վրա: Անգամ այդ դեպքում փաշինյանական իշխանությունը, շրջանառվելով ու զովագդելով այդ օտարածին ծրագիրը, այսօր իսկ ու մոտակա հեռանկարում լուծում է մի շարք հակաժողովրդական ու հակահայկական խնդիրներ, որոնցից ստորև նշում եմ

հիմնականները և ամբողջացնում նախորդ վերլուծությունը: 1. «Ակադեմքաղաք» ծրագիրը շեղում է հայ հասարակության ուշադրությունը Հայաստանի ռազմական անվտանգությունն ապահովելու կենսականորեն կարևոր հրատապ խնդիրներից, այն էլ՝ Ադրբեջանի հնարավոր խոշոր հարձակման նախաշեմին: Քաղաքական մեծ շուրջ բեմադրելով՝ Փաշինյանը պարպում է հասարակության մտավոր հատվածի սուղ ռեսուրսները մի նոր, արհեստականորեն ստեղծված ուղղությամբ, ստիպում է մարդկանց մտածել սեփական ճակատագրի առջև ծառացած նոր, անհեթեթ, բայց վտանգավոր մարտահրավերների մասին: Իսկ այդ ընթացքում Փաշինյանն ու իր թիմն ազատություն են ստանում հերթական տարածքային զիջումներով Ադրբեջանի պահանջները բավարարելու և սեփական իշխանությունը երկարաձգելու համար: 2. «Ակադեմքաղաք» ծրագրի անպատեհ և հանկարծակի առաջնորդումով փաշինյանական իշխանությունը հրահրում է բուռն հասարակական քննարկումներ ու այդպիսով բաժանարար նոր գծեր անցկացնում՝ փորձելով միմյանց դեմ հանել պրոֆեսորադասախոսական կազմի ավագ և երիտասարդ սերունդների ներկայացուցիչներին, ավանդական և ազատական հայացքներ ունեցող ուսանողներին, մայրաքաղաքի կենտրոնի և ծայրամասերի բնակիչներին, երևանցիներին և մյուս հայաստանցիներին առհասարակ: Այդպիսի նեղ միջոցներով իշխանությունն ուժեղանում է, իսկ հասարակությունը՝ ավելի ու ավելի թուլանում: Արդյունքում՝ մեծապես վնասվում ու վտանգվում են Հայաստանի պետության և ժողովրդի կենսական շահերը: 3. «Ակադեմքաղաք» ծրագրի միջոցով փաշինյանական իշխանությունը ստուգում-ընտրում է համալսարանական և ակադեմիական միջավայրում իրեն կուրորեն ենթարկվող, առավելագույնս հարմարվողական տարրերին՝ նրանց հետագայում ղեկավար պաշտոնների նշանակելու, իսկ «անհնազանդներին» բոլոր պաշտոններից զրկելու նպատակով՝ բնականաբար, հաշվի չառնելով ոչ առաջինների, ոչ էլ երկրորդների մասնագիտական ու բարոյական հատկանիշները: 4. Ակադեմքաղաք ծրագրի դեմ հանդես եկող հայրենասեր ու սկզբունքային գիտնականներին ու դասախոսներին պատժելով ու մյուսներին «դաս տալով»՝ փաշինյանական իշխանությունը փորձելու է ամբողջական վերահսկողություն հաստատել հայոց մտքի ու մտավոր աշխատանքի կառույցների վրա: 5. «Ակադեմքաղաքի»



Արմեն Այվազյան

ծրագրի շրջանառումը լուրջ անհանգստություններ ու անվստահություն է սերմանում գիտնականների և ուսանողների միջավայրում, համընդհանուր փլուզման ու վախճանի մթնոլորտ ստեղծում, որը ստիպում է շատերին մտածել երկրից արտագաղթելու մասին: Հայաստանի մտավոր ռեսուրսների հետագա արտահոսքն ու դուրս մղումն իրենց հերթին նպաստելու են ՀՀ դրածո իշխանությունների քաղաքական կյանքի «կայունությանն» ու երկրի կամայական ու ապաշնորհ կառավարմանը: 6. Փակվելիք ԲՈՒՀ-երի շուրջը վերջին տասնամյակներում ձևավորված մանր ու միջին բիզնեսներն ու տնտեսությունները մեծ վնասներ են կրելու, շատերը սնանկանալու են: Իսկ ԲՈՒՀ-երում և նրանց շրջակայքում աշխատող բանվորներն ու ծառայողները՝ գործազուրկ են դառնալու: Դա ևս արտագաղթի լայն դուռ է բացելու: 7. Փոխարենը՝ պետական բյուրոկրատիան լայն հնարավորություններ է ստանալու կոռուպցիոն սխեմաների մեջ մտնելու և իր համար հանցավոր գերշահույթներ ապահովելու՝ մեծ շինարարության ապագա գործարքները, տեղերներն ու այլ կարգի ֆինանսական ռեսուրսները («հանել պատռները») բաշխելու և վերաբաշխելու միջոցով: 8. Փորձ է արվում նաև Փաշինյանի քաղաքական կերպարին զոհել ինչ-որ դրական գծեր հաղորդել՝ շինարարական մեգածրագրերի մասին խոսակցություններով կոծկել կամ առնվազն մեղմել նրա պետական դավաճանությունն ու ահռելի ծախսողունները:

Արվեստագետների գիրքորոշումներն արվեստի բուհերի միավորման և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ապագա ակադեմիական փառաքին մաս դարձնելու, ճեղափոխելու վերաբերյալ



5 ապրիլի 2024 թ.

**ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովն ընդունեց որոշում.
«ՀՀ պետական բուհերի խոշորացման և
գիտահետազոտական կազմակերպությունների հետ
միավորման գործընթացի մասին»**

Սույն թվականի ապրիլի 3-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր ժողովն ընդունեց որոշում՝ «ՀՀ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի մասին»։ Որոշման մեջ նշված է.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) ընդլայնված ընդհանուր ժողովը՝

- քննարկելով ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (բուհեր) խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների փոխգործակցության հնարավորությունների հարցը,

- ենթադրելով, որ «Ակադեմիական քաղաք» ծրագրի ներդրումը կնպաստի ՀՀ-ում բուհական կրթության արդիականացմանն ու միջազգային մրցունակության բարձրացմանը,

- հաշվի առնելով ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների առաջարկությունները պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ ինտեգրման գործընթացի վերաբերյալ,

- հիմք ընդունելով ՀՀ բարձրագույն կրթության և գիտության զարգացման արդի փուլը, տասնամյակներով ձևավորված և արդեն իսկ կայացած ավանդույթների ու միջազգային ճանաչում ունեցող գիտական դպրոցների պահպանմանն ու հետագա զարգացման անհրաժեշտությունը,

- հաշվի առնելով գործընթացի մասնակիցների/շահառուների լիարժեք համաձայնության բացակայությունը,

- հիմք ընդունելով գիտական և գիտակրթական բնագավառների կազմակերպման համաշխարհային փորձը՝ համարում է՝

- տեղային ու աշխարհաքաղաքական իրողությունների ներկա պայմաններում գիտության և բարձրագույն կրթության ավանդական մոդելի կտրուկ ու արմատական փոփոխությունը նպաստավոր չէ երկու ոլորտների համար էլ,

- անթույլատրելի է բոլոր բուհերը և գիտական կազմակերպությունները մեկ վայրում կենտրոնացնելը ռազմավարական ու անվտանգային նկատառումներով,

- անհրաժեշտ է ապահովել գիտական գործունեության կազմակերպման ձևերի բազմազանություն՝ բուհերը պետք է ունենան ժամանակակից գիտահետազոտական բաղադրիչ/միավորներ, սակայն պետք է լինեն նաև ինքնուրույն, առանձին գործող, հիմնականում գիտական և գիտատեխնոլոգիական գործունեություն իրականացնող կազմակերպություններ կամ դրանց համակարգեր,

- ՀՀ պետական բուհերի խոշորացման ու արդիականացման ընթացքում չպետք է խաթարվի Հայաստանի գիտության կայուն զարգացումն ու գիտատեխնոլոգիական առաջընթացը,

- նպատակահարմար է, որ ԳԱԱ գիտական կազմակերպությունների տնօրենների խորհուրդը քննարկի ակադեմիայի գիրքորոշումները «ՀՀ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի» վերաբերյալ և դրանք ներկայացնի համապատասխան աշխատանքային խմբերին:

«Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում գիտության և կրթության ինտեգրման առավել արդյունավետ և քիչ ռիսկային ու իրատեսական տարբերակն է.

1. ակադեմիական քաղաքի կլաստերներում ինտեգրվում են այն բուհերը և գիտական կազմակերպությունները և/կամ դրանց կառուցվածքային միավորները, որոնց գործունեությունը գերազանցապես համընկնում է տվյալ կլաստերի գործառնությունների հետ (փոխադարձ համաձայնությամբ),

2. ռիսկային գործոնները բացառելու նպատակով կլաստերների ձևավորումն իրականացվում է փուլային տարբերակով (պիլոտային ծրագրերի իրականացում),

3. ակադեմիական քաղաքի կլաստերների ձևավորմանը զուգահեռ ԳԱԱ համակարգում մասնագիտական գործունեության ոլորտներով մոտ գիտական կազմակերպությունների հենքի վրա ձևավորվում են գերազանցության գիտական կենտրոններ/ցանցեր, ինստիտուտներ ու միջազգային կազմակերպություններ (գլոբալ հետազոտական ուղ-

ղություններով մեկական կենտրոն), որոնք կարող են համագործակցել հանրապետության բոլոր բուհերի հետ,

4. հանրապետության գիտական, տեխնոլոգիական և/կամ պաշտպանական խնդիրների լուծման համար ձևավորվում են հատուկ նշանակության գիտական/գիտատեխնոլոգիական կազմակերպություններ, որոնք գործում են վերոնշյալ երկու կառույցներից դուրս:

Ինտեգրման վերը հիշատակված տարբերակը հնարավորություն կտա գիտական և գիտակրթական բնագավառներում ապահովել և՛ կազմակերպման ձևերի բազմազանություն, և՛ գիտատեխնոլոգիական առաջընթացի զարգացման համար անհրաժեշտ մրցակցային պայմաններ:

ՀՀ բարձրագույն կրթության և գիտության համագործակցությունը հնարավոր է կազմակերպել/իրականացնել ինտեգրման հետևյալ գործառնությունների շրջանակում՝

- հիմնարար հետազոտությունների համատեղ ծրագրերի իրականացում՝ գիտական կենտրոնների/ինստիտուտների հետազոտական ծրագրերում բուհերի գիտական ներուժի և պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավմամբ և հակառակը,

- համատեղ գիտական/տեխնոլոգիական լաբորատորիաների/կենտրոնների ստեղծում բուհերում՝ հիմնականում գործնական նշանակություն ունեցող, որոշակի խնդիրների լուծմանը միտված հետազոտություններ իրականացնելու նպատակով՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի, ԳԱԱ-ի և համատեղ միավորի տեղակայման բուհի միջև պայմանագրերի հիման վրա,

- բուհերի բազային ամբիոնների ձևավորում գիտական կենտրոններում/ինստիտուտներում՝ առաջատար գիտնականների ղեկավարությամբ կոնկրետ գիտական և/կամ գիտատեխնիկական խնդիրների լուծման գործընթացներում ուսանողներին ներգրավելու նպատակով,

- գիտակրթական կլաստերների ձևավորում ըստ բնագավառների ու մասնագիտությունների՝ բուհ(եր)ի, գիտական կենտրոնների/ինստիտուտների, արտադրական ու տնտեսավարող սուբյեկտների, ըստ անհրաժեշտության նաև պետական կառավարման մարմինների ներգրավմամբ՝ ուսանողների հմտությունների զարգացմանն ու մասնագիտական ուղու ձևավորմանն աջակցելու նպատակով:

Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից չափանիշներին համապատասխան բուհեր ձևավորելու/հիմնադրելու միջոցառումները պետք է մի կողմից միտված լինեն նոր ձևավորվող բուհերում ժամանակակից գիտահետազոտական միջավայր ապահովելուն ու գիտության արդի պահանջներին համապատասխան գիտակրթական գործառնություններ կազմակերպելուն («research-based education»՝ հետազոտությունների վրա հիմնված կրթություն), մյուս կողմից պետք է պահպանվեն ու զարգացվեն Հայաստանի գիտական ավանդույթները և նպաստեն միջազգային գիտական/գիտատեխնիկական տարածքում մեր գիտական կազմակերպությունների ձեռքբերումների և ուրույն տեղի պահպանմանն ու զարգացմանը:



ԸՆՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ **ԴԵՍ Է, ՈՐ** ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՆ ՈՐԵՎԵ ԱՅՆ ԿԱՌՈՅՅԻ ՄԱՍ ԿԱԳՄԻ

Նեն նոր ձևավորվող բուհերում ժամանակակից գիտահետազոտական միջավայր ապահովելուն ու գիտության արդի պահանջներին համապատասխան գիտակրթական գործառնություններ կազմակերպելուն («research-based education»՝ հետազոտությունների վրա հիմնված կրթություն), մյուս կողմից պետք է պահպանվեն ու զարգացվեն Հայաստանի գիտական ավանդույթները և նպաստեն միջազգային գիտական/գիտատեխնիկական տարածքում մեր գիտական կազմակերպությունների ձեռքբերումների և ուրույն տեղի պահպանմանն ու զարգացմանը:

Հաշվի առնելով Հայաստանի գիտական կազմակերպությունների և բուհերի ինստիտուցիոնալ կարողությունների արդի մակարդակը՝ գտնում ենք, որ ներկա իրավիճակում անհրաժեշտ է զարգացնել ԳԱԱ որպես գիտահետազոտական կազմակերպությունների համակարգ, որը մի կողմից համագործակցում է բուհերի հետ՝ ապահովելով գիտական արդյունքի ձեռքբերման և կրթության համար ակտիվ գիտական միջավայր, մյուս կողմից՝ պետական գերատեսչությունների ու տնտեսության մասնավոր հատվածի հետ՝ պետական գիտատեխնոլոգիական, այդ թվում՝ պաշտպանական, պատվերների ձևավորմանն ու դրանց կատարմանը մասնակցելու և տնտեսական շրջանառության մեջ գիտական արդյունքների ներդրմանը խթանելու նպատակով:

Անկախից, «պատկան մարմինների գործուն աջակցությունը՝ ԳԱԱ կառուցվածքի ու կառավարման մեխանիզմների արդիականացմանը և գործառնությունների արդյունավե-

տության բարձրացմանն ուղղված ԳԱԱ առաջարկներին ընթացք տալու հարցում»։ Որոշումը դրվել է շրջանառության մեջ:

*ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և
հասարակայնության հետ կապերի բաժին
05.04.2024թ.
<https://www.sci.am/newsview.php?id=821&langid=1#top>*

* * *

Այն, որ ԲՈՒՀ-երի միավորման հարցն առայժմ դեռ նախագծի տեսքով է, դեռ երաշխիք չէ, որ չի կարող իրականություն դառնալ: «Միավորվող» ԲՈՒՀ-երի ցանկի մեջ է նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, մեր պետության թիվ մեկ պրոֆեսիոնալ բարձրագույն երաժշտական հաստատությունը, կառույց, որն իր մեկոպոյա գոյության ընթացքում բազմաթիվ անգամ հաստատել է թե՛ իր բարձր կարգը, թե՛ իր նշանակության կարևորությունը ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային երաժշտարվեստում:

Մայրաքաղաքի սրտում կառուցված երաժշտական դարբնոցի շենքը, որպես կառույց, լրացնում է այն իսկա մշակութային համալիրը, որի մեջ ներառված են քաղաքի գլխավոր համերգասրահները, երաժշտական դպրոցները, պարարվեստի ուսումնարանը և այլն, ուստի կոնսերվատորիայի տեղափոխությունը այլ վայր ուղիղ իմաստով կանդիդատական հաստատության օրգանիկ գործունեության վրա: Բացի այդ, միավորվելով այլ ԲՈՒՀ-երի հետ, փաստացի կդադարի գործել որպես ինքնուրույն կառույց, ինչը ևս ոչ մի կերպ օգուտ չէ հաստատությանը, առավել ևս, որ հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադրի՝ մեծանուն Կոմիտասի անունն այս դեպքում կհայտնվի, մեղմ ասած, լուսանցքում:

Ավելորդ չէ նշել, որ աշխարհի բազմաթիվ երկրներում կան ակադեմիական քաղաքներ, սակայն դա որևէ կերպ չի ազդել, որ փակվեն երկրի համար կենսական նշանակություն ունեցող կոնսերվատորիաները: Ընդհակառակը, պետությունները շարունակել են իրենց բարձր հոգածության ներքո պահել այդ հաստատությունները: Ի վերջո մշակույթի բարձր մակարդակը ցանկացած պետության դիմագիծն է:

Պետք է ջանք ու եռանդ չխնայել, որպեսզի մեր ազգային արժեքներից մեկը՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան XXI դարում նորովի զարգանա՝ շարունակելով լինել թե՛ մեր մայրաքաղաքի, թե՛ մեր ժողովրդի առանցքային կրթօջախներից մեկը: Ուստի այս առիթով, Հայաստանի կոմպոզիտորների միությունը, որի կազմում ընդգրկված գրեթե բոլոր անդամներն ավարտել են հենց այս հաստատությունը, իսկ մի մասն անգամ աշխատում է այդտեղ, իր աջակցությունն է հայտնում Երևանի պետական կոնսերվատորիան իր շենքում գործունեությունը շարունակելու և որևէ այլ կառույցի մաս չկազմելու գաղափարին:

Հայաստանի Կոմպոզիտորների Միություն
<https://www.facebook.com/profile.php?id=61557189935724>
<https://www.facebook.com/YerevanStateConsevatory>

* * *

Հայաստանի երաժշտական Ընկերության վարչության և նախագահության հարգարժան անդամներն իրենց մտահոգությունը և անհանգստությունն են արտահայտում մեր հանրապետության միակ երաժշտական բարձրագույն ուսումնական հաստատության նկատմամբ նման վերաբերմունքի առթիվ: Մեր կոնսերվատորիան 103 տարեկան է՝ պետական համալսարանից հետո 2-րդ ԲՈՒՀ-ը: Հայաստանի Կառավարության որոշմամբ

Արվեստագետների դիրիորոշումներն արվեստի բուհերի միավորման եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ապագա ակադեմիական ֆաղափ մաս դարձնելու, ճեղափոխելու վերաբերյալ



1936 թ. անվանակոչվեց Մեծն Կոմիտասի անունով և այսօր այն վտանգված է: Ի դեպ, դեռևս խորհրդային միության տարիների ժամանակներից, Երևանի Պետական կոնսերվատորիան, Մոսկվայի և Պետերբուրգի կոնսերվատորիաներին զուգահեռաբար համարվել է լավագույնը մասին խորհրդային 15 հանրապետությունների կոնսերվատորիաների շարքում: Մեր կոնսերվատորիայի ուսանողները և շրջանավարտները, օժտված լինելով բարձր պրոֆեսիոնալիզմով, ոչ միայն մշտական համալրել են հանրապետության և նրա սահմաններից դուրս երաժշտական կոլեկտիվները, այլև աշխարհի տարբեր հեղինակավոր մրցույթներում արժանացել և արժանանում են մեծ մրցանակների: Եվ այսօր էլ մեր կատարողական արվեստի շրջանավարտների մի զգալի մասը աշխարհի լավագույն նվագախմբերում, օպերային թատրոնի բեմերում բարձր են պահում հայ դպրոցի պատիվը: Եվ այս պարագայում արվեստի ԲՈՒՀ-երի միավորումը մեկ կաթսայի մեջ գաղափարը՝ ինչքան էլ վերամբարձ հնչի, «Ակադեմիա» նշանակում է մեխանիկորեն վերացնել Կոմիտասի անունը:

Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիան գտնվում է մեր մայրաքաղաքի սրտում, որի հարևանությամբ են գործում Ա.Սպենդիարյանի անվ. օպերային թատրոնը, ֆիլհարմոնիկ սիմֆոնիկ նվագախումբը, կամերային երաժշտության կենտրոնը, մեր մշակույթի և արվեստի մեծերի տուն-թանգարանները, որոնք սնունդ և սնվում են մեր կոնսերվատորիայով:

Խնդրում ենք հարգել մեր մտահոգությունները
ՀեԸ վարչության և նախագահության անունից ամենայն հարգանքներով՝

ՂԱԿԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ
Հայաստանի երաժշտական Ընկերության
պատվավոր նախագահ,
Կոմիտասի անվան ԵՊԿ խմբավարության և սիմֆոնիկ
դիրիժորության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր,
ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ,
«Մ. Խորենացի» մեդալակիր,
«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» I-ին
կարգի շքանշանակիր



«Խոշորացում ենթադրում է նախնական բուհեր, որոնք ըստ էության գումարելիներ են, և դրանց արդյունքում առաջանում է մեկ խոշոր բան. գումարվում են իրար և վերջնափառվում դառնում մեկ խոշոր բանի բաղադրիչ: Ստացվում է, որ դա ենթադրում է, որ Կոմիտասի անվան կոնսերվատորիա խորագրով բուհ այդ խոշորացված համակարգում չկա: Կա ուրիշ բան, ասենք շատ ավելի լավ բան, ասենք իրաշք կա այնտեղ: Բայց Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիա հասկացություն այնտեղ այլևս չկա: Ստացվում է, որ

անուղղակիորեն դա բուհը փակում է:
Հայաստանում վերջին անգամ համալսարան են փակել 1435 թվականին, երբ թեմուրյան գահակալ Շահռուխի հրոսակները գրավել և հրի են մատնել Տաթևի համալսարանը:

ՄՅԵՐ ՆԱԿՈՅԱՆ,
երաժշտագետ, միջնադարագետ, կոմիտասագետ,
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր,
ԵՊԿ պրոֆեսոր:

Այն, ինչ առաջարկվում է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի վերաբերյալ, պարզապես, անկարելի բան է: Նախաձեռնողներն, ամենայն հավանականությամբ, չեն պատկերացնում, ինչ չափերի և նշանակության համակարգի հետ գործ ունեն:

Կոմիտասի անվան կոնսերվատորիան Հայ երաժշտական մշակույթի կենսունակությունն ապահովող հիմնական արտերիան է, որն անքակտելիորեն և փոխադարձաբար կապված է, ոչ միայն իրեն շրջապատող համերգային դահլիճների և օպերային թատրոնի հետ, այլև հանրապետությունում գործող երաժշտական բոլոր կրթօջախների, կոլտուրական տարատեսակ կառույցների հետ: Թե ուղղակիորեն, թե անուղղակի:

Նրա գործունեությունն է, որ ի վերջո պայմանավորում է, այսպես կոչված, մշակութային «քաղաքականությունը», հաստատում երաժշտարվեստի գնահատման չափանիշները: Այստեղ է, որ սովորողն ստանում է մարդու հոգևորը կրթելու բարձրագույն դասը: Այստեղ է, որ ապահովվում է բազմադարյան մշակույթի շարունակական երթը: Եվ էլի, էլի շատ ուրիշ, կարևոր բաներ:

Ինչու պիտի այս շքեղ հաստատությունը, իր բազմաթիվ բաժիններով, հիրավի երաժշտական համալսարան, թողնի իր արժանավայել տեղը, տասնամյակներով ձևավորված իր ատուրայով և տեղափոխվի «ծածուկ» մի տեղ, մաս կազմելու ինչ որ մի կառույցի:

Մի՞թե մենք այդքան ենք հարգում մեր մշակույթը: Ողբալի է, երբ նման հաստատությունն իր տեղում և կարգավիճակում պահելու համար կարիք է առաջանում ամոթալի ստորագրահավաքի:

Հարյուր երեք տարվա ընթացքում կոնսերվատորիան ավարտած և ազգային արվեստին համաշխարհային ճանաչում բերած հարյուրավոր արտիստներ վաղուց ի վեր դրել են անհրաժեշտ ստորագրությունները...

ՍԿԵՏԼԱՆԱ ՆԱԿԱՍԱՐԴՅԱՆ
ՀՀ ժող. արտիստ, ՀՀ Պետական մրցանակի դափնեկիր
«Ս. Մեսրոպ Մաշտոց» և «Պատվո» շքանշանների
ասպետ, պրոֆեսոր,
Շումանի, Բախի, Եղիսարեթ թագուհու անվան և
Սիդնեյի միջազգային մրցույթների դափնեկիր

Կոմիտասի անվան կոնսերվատորիան բուհերի միավորման նախագծում ներառելու քննարկումները հուզում, խռովում և վրդովմունքի ալիք են առաջացնում ոչ միայն մասնագետ երաժիշտների, արվեստագետների, այլև՝ իրական արժեքների ու մշակութային կառույցների խորհուրդն ընկալող հասարակության լայն շերտերի շրջաններում:

Սփյուռքահայ և օտարերկրյա բազմաթիվ երաժիշտների համար Կոմիտասի անունը կրող կոնսերվատորիան մասնագիտական կրթություն ձեռք բերելու բարձր և լուսավոր փարոս է, որին նրանք ձգտում և այդ անունով ներկայանում են աշխարհին:

Կոնսերվատորիան պետք է պահպանվի որպես Alma Mater Studiorum՝ Երևանի մշակութային համալիր կենտրոնում, որի կենսունակությունն ապահովող անփոխարինելի օղակն է:

ԼԻԼԻԹ ԵՐԱԶԱՐՅԱՆ
Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ արվեստի
վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱՄ արվեստի
ինստիտուտի առաջատար գիտաշխատող,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Հայաստանի կոմպոզիտորների միության և վարչության
անդամ,
<https://www.facebook.com/photo/?fbid=941025138027923&set=a.485914906872284>



LILIT YERNJAKYAN
Doctor of Arts, Professor, Honored Worker of Art of the Republic of Armenia, Leading Researcher at the Institute of Arts of the National Academy of Sciences of RA.
The member of the Union of Composers of Armenia
Chairman of the Management Board of Yerevan Komitas State Conservatory

Yerevan Komitas State Conservatory is well known for its unique structure, traditions and mission and can be singled out as such among the higher educational institutions in Armenia. It is an irrefutable fact that art and knowledge inspired by the great Komitas should be preserved and boosted, its exceptional value should be presented to the international audience and for that it is crucially important that the building of the conservatoire, which has become an iconic place for the musicians worldwide, remain standing in its time-tested place, in an environment most conducive to enrichment of its unbroken traditions ever since its establishment.

Discussions to include the Yerevan Komitas State Conservatory in the current “Academic Town” project are causing a wave of excitement, unrest, and indignation not only among professional musicians and artists, but also among those who understand the exceptional significance of cultural values. Many Diaspora-Armenian and foreign musicians proudly attend the Komitas Conservatory, acclaiming it as a bright beacon of professional education and give homage to it for their professional achievements. The conservatoire has a mission to fulfill as the Alma Mater Studiorum and being the nourishing heart of Yerevan’s musical-cultural complex, it can go on nourishing the cultural life of Armenia for maximum vitality from its present place.



Ամբողջ աշխարհին հայտնի է և բոլորս էլ գիտենք, որ կոնսերվատորիաների շենքերը գտնվում են մշակութային կենտրոններում՝ օպերա, կամերային երաժշտության տուն, Առնո Բաբաջանյանի անվան համերգասարհ, Արամ Խաչատրյանի տուն թանգարան, այսպես ասած, երաժշտական ջոնփուսում կան ինչպես ասվում է կլաստերում: Ուստի կոնսերատորիան իրեն համապատասխան տեղակայված է:

Կարճ ասած՝ եթե նույնիսկ իշխանությունում հայտնված դրածոները չկարողանան լուծել իրենց առջև դրված «մաքսիմում ծրագիրը»՝ հայկական ԲՈՒՀ-երի ապամոնտաժումն ու տեղափոխումը Երևանից դուրս կառուցվելիք Ակադեմքաղաք, այդ ամենից ու վնասակար գաղափարի շրջանառումն արդեն իսկ Հայաստանին ու հայությանը սկսել է մեծ վնասներ պատճառել:


ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ
Քաղաքական գիտությունների դոկտոր
https://yerkir.am/hy/article/2024/03/14/26807?fbclid=IwY2xjawHRCI5leHRuA2FibQlMQABHa7SvpAZUxUoxYp5nf5dWBZggv1QbzF6rq0D06oTVGU5dTTnAjLbq5y2WkA_aem_vCcMRBt9UmnI61mbYdZCTQ



საქართველო

Երևանի Սուրբ Եջեղիմի եկեղեցու մեջ ԵՊՀ-ի Մանկավարժական ֆակուլտետի ուսանողները մասնակցում են «Երևանի Սուրբ Եջեղիմի եկեղեցու մեջ» խմբակին:

Արվեստագետների դիրիորշումներն արվեստի բուհերի միավորման եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ապագա ակադեմիական ֆազաի մաս դարձնելու, Տեղափոխելու վերաբերյալ
Գետրգ Ալեքսանդրի Թամասյանը. Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի չափարապետը



ԳԵՏԻՐԳ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԹԱՄԱՍՅԱՆ
Երեւանի Կոմիտասի անվան պետական
կոնսերվատորիայի և Սայաթ Նովայի անվան
երաժշտական դպրոցի և պարարվեստի ուսումնարանի
միացյալ շենքերի ճարտարապետը

Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շենքի ճարտարապետը՝ Գետրգ Ալեքսանդրի Թամասյանն է (փետրվարի 13 (26), 1910 թ., Սանկտ Պետերբուրգ, Ռուսական կայսրություն - հոկտեմբերի 4, 1993, Երևան, Հայաստան), մեծանուն հայ ճարտարապետ Ալեքսանդր Թամասյանի որդին։ Նա ՀԽՍՀ վաստակավոր շինարար (1957 թ.) էր, ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ (1968 թ.)։ Թամասյանների երջանիկ ընտանիքում ծնվեց չորս երեխա՝ ավագ դուստրը՝ Սարիան 1908-ին, որդին՝ Գետրգը 1910-ին, դուստրը՝ Վարվառան 1916-ին և կրտսեր որդին՝ Դուլիսը (3ուկի) 1922-ին։

«Թավրիգում Ալեքսանդր Թամասյանը հաջողաբար աշխատում էր։ <...> Սակայն տեղափոխվելուց անմիջապես հետո ավագ դուստրը՝ Սարիան, հիվանդանում և մահանում է։ Նա ընդամենը 13 տարեկան էր։ Դա սարսափելի ժամանակ էր ամբողջ ընտանիքի համար։ Ճակատագիրը դաժան

էր, բայց շուտով այն երջանկություն բերեց, երբ ընտանիքում 1922-ին կրտսեր որդին ծնվեց՝ Դուլիսը։ Մինչդեռ, Հայաստանի խորհրդային նոր կառավարությունը բազմաթիվ պաշտոնական հրավերներ էր ուղարկում Ալեքսանդր Թամասյանին, հորդորելով նրան վերադառնալ Հայաստան, իր մասնագիտությամբ աշխատելու համար։ Թամասյանների ընտանիքը Հայաստան վերադարձավ 1923-ի մարտին։ Կարելի է ասել, որ Երևանը «մաքուր կտավ էր», որտեղ Մաեստրոն ուզում էր ստեղծել իր երազած քաղաք-պարտեզը ապագա սերունդների համար։

<...> 1934-ին ընտանիքին հարվածեց մեկ այլ մեծ վիշտ, երբ իրենց սիրելի դուստրը Վարվառան՝ 18-ամյա գեղեցիկ աղջիկը, տաղանդավոր դաշնակահարը, ով ուներ մեծ ապագա, մրսելուց հետո բարդություն ստացավ և մահացավ։ Այս հսկայական հարվածը անտանելի էր ընտանիքի և ընկերների համար։ Ալեքսանդր Թամասյանի առողջությունը կտրուկ վատացավ՝ հատկապես նրա տեսողությունը։ Ամեն օր անկախ եղանակից, նա այցելելու էր իր երկու դուստրերի գերեզմանները։ Ընտանիքի համար դա ամենադժվար ժամանակն էր։

Հատկապես Թամասյանին կիսամեռ վիճակից դուրս բերելու համար, կազմակերպվեց նրա ուղևորությունը Մոսկվա և թվում էր, որ այնտեղ գտնվելով, նա լի էր Շչեքբատովի տունը վերանորոգելու գաղափարներով։ Սակայն Երևան վերադառնալուն պես, ծնունդ ցուրտ օրը, Ալեքսանդր Թամասյանն անմիջապես այցելեց իր դուստրերի գերեզմանները, հիվանդացավ և չկարողացավ վերականգնել թոքաբորբից։ Ալեքսանդր Դովիանցեսի Թամասյանը մահացավ 1936-ի փետրվարի 20-ին, իր ընտանիքը ու ընկերներին սրտացավ ու իր կարևոր գործը կիսատ թողնելով։ Նրա ծրագրերից շատերն իրականացրել են նրա տաղանդավոր որդիները՝ ճարտարապետներ Գետրգ և Դուլիս Թամասյանները, ինչպես նաև Թամասյանական ճարտարապետական դպրոցի ճարտարապետները, շրջանավարտները և գործընկերները, ովքեր տարիներ շարունակ աշխատել էին Վարպետի հետ»։ <http://www.alexandertamanyan.com/intanig/>

Գետրգ Թամասյանն աշխատել և կատարելագործվել է Երևանում՝ հոր արվեստանոցում։ Նրա մահից հետո ավարտին է հասցրել շինարարական ընթացքի մեջ գտնվող կառույցները՝ Կառավարական տունը, Օպերայի և բալետի թատրոնի, Ազգային գրադարանի շենքերը։

1948-1955 թվականներին եղել է Երթադիտորիդի, 1955-1958 թվականներին՝ Հայպետնախագիծ, 1958-1962 թվականներին՝ Երևաննախագիծ ինստիտուտների ճարտարապետական արվեստանոցների ղեկավար։

Գետրգ Թամասյանի նախագծերով Երևանում կառուցվել է Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի և պարարվեստի ուսումնարանի միացյալ շենքը (1948-1950 թվականներին, նոր կողաշենքը՝ 1976 թ.), Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան (1969-ին հանձնվել և ուսումնական տարին սկսվել է այդ շենքի համապատասխան կորպուսներում և վերջնականապես ավարտվել է՝ 1975 թ.) և այլ շինություններ, նշում ենք մշակութայինները՝ մշակույթի պալատներ՝ ճարտարուն (1969 թ.) և Մարտունիում (1973 թ., երկուսն էլ՝ ԼՂՀ-ում՝ Արցախի հանրապետությունում) և այլն։

Գետրգ Թամասյանը ստեղծել է 1400 նստատեղով ներկայիս Արամ Խաչատրյանի անվան համերգային մեծ դահլիճը (ավարտվել է 1953 թվականին), որը նրա ստեղծագործության գլուխգործոցն է, նաև նշենք, որ նրա հսկողությամբ է մշակվել և իրականացվել նաև Կառավարական տան 800-տեղանոց նիստերի դահլիճը։

Պարգևատրվել է ՀՀ Պետական մրցանակներով (1970, Հանրապետության հրապարակի կառուցապատման, 1980, Ալեքսանդր Մաեստրոյի անվան օպերայի և բալետի թատրոնի շենքի համալիր վերակառուցման համար)։

Երիտասարդ ճարտարապետների ստեղծագործության համամիութենական (1947 թ.), «Տարվա լավագույն կառույց» հանրապետական (1953 թ.) ստուգատեսների դափնեկիր է։

Նյութը պատրաստեց՝
ԳՐԶՐ ՇԱԳՈՅԱՆ
<https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D6%87%D5%B8>
լուսանկարը՝ 10.03.2023 թ.

<https://mamul.am/am/news/261536>

«ՊՏՈՅ մը կոնսերվատորիայի միզանյութերով» փոխառված միտք՝ մեծն Հակոբ Պարոնյանից

«Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսորադասիստական կազմի և ուսանողության միասնությունը կոմիտասականների սիրո և ջերմության արդյունքն է և խոստովանությունը 103-ամյա բուհին։ Եվ գարնանամուտի առթիվ կոնսերվատորիայից և ռեկտորից նվիրված Կոմիտասի կոնսերվատորիայի խորհրդանշով կրծքանշանը բոլորս կրում ենք, որպես ըմբոստության և Կոմիտասին ու կոնսերվատորիային հավատարմության խոհրդանիշ Մարտի 27-ի Գիտական խորհրդին բոլորն այդ նշանով և այդ խորհրդով էին եկել։ Ինչպես գրում է Վահան Արծրունին «Հայաստանում ծնունդ առավ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՃԱԿԱՍ»։


20-ամյա «ԵՊԿ հրատարակչության» հիմնադիր Գ. Շագոյան։ Այն ստեղծվել է 1996-ից, այժմ՝ 26-ամյա, ամսագրի խմբագրության առկայությամբ, որի հիման վրա էլ 2004-ին հիմնադրվեց հրատարակչությունը։ Գիտականորեն ապացուցված է. որևէ մի կառույց ստեղծելու և կայանալու համար ութ տարի է անհրաժեշտ, իսկ քանդելու համար՝ երկու»։

Դեն են «Ակադեմիական քաղաքի» ծրագրին և բուհերի խոշորացմանը, այսինքն՝ բացասական կարծիք ունեն կրթության համատարած Օպտիմիզացիայի գաղափարի վերաբերյալ։

Այդ ծրագրով նախ խաթարվեց Կոնսերվատորիայի բնականոն հանգիստ աշխատանքային գործունեությունը մեզ զբաղացնելով այդ անհեռանկարային ծրագրով, որը ոչինչ բացի բացասական դրսևորումներից չի ակնկալվում։ Տպավորություն ունեն, որ մեր ուշադրությունը շեղելու և ավելորդ անհանգստություններ և տագնապներ ստեղծելու համար է մեր հոգիներում։ Հիշենք ֆիլմերից հայտնի տեսարաններ լարային կվարտետը կամ նվագախումբը նվագում էր մինչև իրենց վերջին շունչը։ Սա է երաժշտի հոգու կերտվածքը մենք ոչինչից չենք վախենում, որովհետև գիտենք, որ երաժշտությունն անմահ է և հավերժ և մենք էլ ծառայում ենք երաժշտությանը, այսինքն՝ «մեր գործն էլ է անմահ և հավերժ», ինչպես ասել է հայտնի դասական՝ Դովհանես Թումանյանը։ Եվ աշխատասիրությունը և այդ ունակությունները բոլորս ձեռք



Տաթևիկ Սազանդարյանի լսարանն է (նաև որդին անգերազանցելի դիրիժոր Դավիթ Խանջյանն էր պարսպում այս լսարանում՝ Պարտիտուրի ընթերցում 1970-1980-ականներին), կոնցերտմայստրը՝ Գայանե Թորոսյան, Սեդա Պապոյան մագիստրոսական 1-ին կուրսի ուսանողուհի պարապմունքի պահին ժողովրդական արտիստուհու հայելու առջև դերերգը փորձելիս և ուշադրություն դարձրեք բեք քանի դռներով է պաշտպանված լուրջությունը՝ լսարանում ապահովվելու համար և չխանգարելու մյուսների դասընթացները



ենք բերել 6-7 տարեկանից, ինչպես նշեցին այս մասին իրենց ելույթներում դաշնակահարուհի, պրոֆեսոր Իրինա Հակոբյանը (ԵՊԿ դաշնամուրային ֆակուլտետի ղեկավար) և դիրիժոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանն իր հաղորդման ժամանակ։

Իճքս սովորել են մեծ միջնադարագետ երաժշտագետ Նիկողոս Թախմիզյանի մասնագիտական դասարանում, ուստի մեջբերեն Դավիթ Անհաղթի գիտական դասակարգումից և ամեն ինչ պարզ է դառնում։ Դավիթ Անհաղթը դասակարգած սանդղակը՝ ամենավերևում սանդղակի Աստվածաբանությունն է, նրանից հետո, նույն հորիզոնականում են։ Երաժշտու-

Ահա դաշնամուրային դասարանների հիշողության մասունքները, դեռ միայն աջ թևամասի 4-րդ հարկում՝ 330 դասարանում աշխատել է ամբիոնի վարիչ Ա. Շ. Գուրգենովը, 328-ում՝ ղեկավար՝ Յուրի Սուրենի Հայրապետյանը այնուհետև 1990-ականներից մինչև կյանքի վերջը՝ Մոսկվայի կոնսերվատորիայի ամբիոնի վարիչ պրոֆեսոր՝ Աննա Ամբակունյանի, Կեսի Մախաթյանի դասարանները

Արվեստագետների դիրքորոշումներն արվեստի բուհերի միավորման եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ապագա ակադեմիական ֆազաի մաս դարձնելու, սեղավոխելու վերաբերյալ



թյունը և Մաթեմատիկան, այնուհետև նրանցից համապատասխանաբար արվեստի ճյուղերը՝ բոլորը նույն հարթությանը՝ Երաժշտությունից արվեստի բոլոր տեսակները և Մաթեմատիկայից էլ ճյուղավորվում են մնացած գիտությունները: Այսինքն, համահավասար է մեծ փիլիսոփան դիտարկում երաժշտության և Մաթեմատիկայի դերի նշանակությունը Աստվածաբանությունից հետո:

Նախ ցանկանում են հարցնել. կետ առաջին՝ մեր որ մի ընտանիքը կուզենա, որ իր երեխային ուղարկի քամփուսում սովորելու և ապրելու: Ամերիկահայ իմ շատ ընկերներ 16 տարեկանից, թե ավելի վաղ հասակից, երբ վարորդական իրավունք կա մեքենա վարելու համար, համալսարան ընդունվող իրենց երեխաների համար մեքենա են գնում, որ քամփուսում չմնան, զնամ գան տուն կամ վարձակալված բնակարաններում են ապրում բարեկամների հետ: Խնդրեն մի այսպիսի հացում էլ կատարեք: Էլ չեն ասում Չայրենիքում հենց Երևանում ապրող ընտանիքները: Չաջորդ կետը. մեր փոքրաթիվ ժողովրդի համար այս պահին քամփուսն ինչի է պետք, երբ Չայրենիքում շատ

մեր ընտանիքների ջերմությունը, հոգատարությունը, հարազատությունը վերացնել: Ապացույցն այն միլիոնավոր դոլարների տրանսվերներն են, որ ստանում ենք այստեղ ապրելով մեր հարազատներից գոյատևման համար Չայրենիքում, իսկ նրանք էլ փափայում են լավացված կենսակերպ, արդարության կատեգորիայի գերակայություն, ժողովրդավար և օրենքի հարգը տեսնելու Չայրենիքում, որպեսզի կարողանան վերադառնալ և մշակութային միջավայրն կարողանան վայելել իր բոլոր լայն առումներով: Որպեսզի երիտասարդները տարբերություններ չզգան բարեկեցիկ երկրներից հետո Չայրենիքում թերություններ չտեսնեն:

Մեր ժողովրդի հազարամյակներով ստեղծած և ավանդված մեր կառուցած մայրաքաղաքի թանանյանական հզոր ճարտարապետությամբ և նախագծով ոչ մի երկրի չնմանվող իր մոնումենտալությամբ ու հարմարավետությամբ և վերջապես գեղեցկությամբ մշակութային քոմփուս են և այլ քոմփուսի ձևերը մեզ համար խորթ միջավայր է, այնպես ինչպես նրանց առկայությունն է մեզ համար խորթ երևույթ:

Երևանի կենտրոնն իր ամբողջությամբ քոմփուս է երիտասարդության կրթության հաստատություններով տեղակայվածության համար: Ես ինքն ընկերուհուս՝ Անահիտ Տեր-Կարապետյանի հետ մեկ տարի (1978-1979 ուստարի) որպես ազատ ունկնդիր ենք հաճախել զուգահեռաբար առաջին կուրսում Պետական համալսարան՝ Գրաբարի դասերի՝ Խորեն Պալյանի բանասիրական բաժնի և կոնսերվատորիա՝ մի քանի ռուպեի ծանապարհ է: Սա էլ ուսանողների շաժնության համար վառ օրինակ:



Գոհար Գասպարյանն էլ իր կյանքի վերջին տարիներին այստեղ պարապում: Կոնցերտմայստեր՝ Նարինե Մելիք-Իսրայելյան աշխատում է ԵՊԿ-ում 1982-ից

չլուծված հարցեր կան: Բոլոր ճյուղերով մասնագիտացումներ ունեցող բուհեր ունենք, իսկ կոնսերվատորիական կրթությունն ամենաբարձրն է՝ ապացույցը մեր աշխարհասփյուռ երաժիշտները և (տե՛ս՝ ամսաթերթի այս համարում և ապրիլյանում տրագովող նյութերը) շատերի ելույթներում հնչած կարծիքները: Գիտե՞ք Ֆրանկլին Դելանո Ռուզվելտն 1940-1945 թվականին պատերազմի տարիներին ուսանողությանը երիտասարդներին Սպիտակ տան այգին տրամադրել էր շփվելու և նրանց խնդիրներն լսելու և նպաստելու, որպեսզի խաղաղվեն և հանդարտվեն ետպատերազմյան կրքերից և խնդիրներից: Գիտե՞ք ինչու, որովհետև ամերիկացիները սարսափում են քաղաքացիական պատերազմից, որ նրանց մոտ ամենաերկարն է տևել մարդկության պատմության մեջ 30 տարի: Իսկ մենք միակ ազգն ենք, որ երբեք պատմականորեն քաղաքացիական պատերազմներ չի ունեցել, և զենետիկորեն և նաև իր պատմական հիշողությամբ՝ չի էլ ունենա: Դա մեր դաստիարակությունից է մեծ ազգ լինելու հասկացողությունից, որ յուրաքանչյուրս զգում է իր մեջքին: Չե որ մեր պատմական հիշողության մեջ մեր անձայրածիր երգիրն է: Պատմությունից քաղենք օրինակներ, իսկ ինչի համար են մեր ընտանիքի ավանդական դաստիարակությունից մեզ զրկում քամփուսի հարմարավետության կամ չգիտես ինչի քողի ներքո: Չէ որ չստացվեց

Ինչու ենք կապկում այն ամենն ինչ որ «զագրանիչնի» է ամենալավը՝ «չեխականը»: Երբ պետք է դուրս գանք այս կարծրատիպերից, որ մինչև չտեսության է հասնում, վատ իմաստով՝ գավառական մտածելակերպի:

Յենիկ Իգիթյանն ասում էր. «Չայ մարդն այն մարդն է, որ ցոցցողի տակ լողանում է»: Շատ մտավորականների կարծիքով այս ամենը պատվեր է, որ կատարվում է մեզ զրկելու մեր հայ մարդու տեսակից: Հիմա սիլիկոնային տարածքներում, օրինակ Մակրոսոֆթը Երևանի քաղաքային մոդելն են ուսումնասիրել և ստեղծում աշխատողների համար, որն անավել արդյունավետ է մտածող համակրզին գամված մարդու համար: Երևանն իր սրճարաններով, մատարաններով, ցայտաղբյուրներով (սա չեն կարողանում, որովհետև ջրի մաքրման խնդիր ունեն, որի պատճառով շշալցված ջուր են խմում), շատրվաններով և այգիներով կանաչապատված տարածքներով:

Դիտավորյալ խոչընդոտներ և դժվարություններ են ստեղծում մեր ազգի համար և երևի նայում են տեսնեն, ինչպես ենք հաղթահարելու, որ մեզանից սովորեն:

Մենք երաժիշտներս շատ ենք շրջագայում և շատ լավ տեսնում ենք տարբեր երկրների հետ մեր Չայրենիքի առավելություններն ուստի առաջին հերթին՝ եթե ունեցողություն է կատարվում երաժիշտների նկատմամբ դա ունեցողություն է ազգի սերույցի, ըստ Դավիթ Անհաղթի և ես կավելացնեմ քաղաքակրթության, որովհետև, Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքակրթ համարվում են այն երկրները, որոնք ունեն Ազգային օպերա, Ազգային գրադարան, պետական մոտային հրատարակչություն, որն ստեղծել է տղերիս հեղինակը՝ («Երաժշտական Չայաստան» ամսագրի խմբագրություն՝

ռեկտոր Արմեն Սմբատյանի օրոք, որի հիման վրա արդեն 20 տարի գործող «ԵՊԿ Հրատարակչությունը»՝ Սերգեյ Սարաջյանի օրոք) և Ազգային Ակադեմիա, որի ինստիտուտներն էլ են «Օպտիմալացման ծրագրում» ներառված՝ մեր բնօրրանը, քանի որ խմբագիր են ՀՀ ԳԱԱ Հրաշյա Աճառյանի անվան բանասիրության ինստիտուտն էլ է, որտեղ Ջահուկյանական ընթերցումներում Ավետ Տերտերյանի 6-րդ Սիմֆոնիայի Չայոց այբուբենին նվիրված իմ գեկույցը ծափահարություններով ընդունվեց, ոչ սովորական երևույթ գիտական միջավայրի համար:

Հրաշյա Աճառյանին 1937 թվականի բանտարկությունից ազատվելուց հետո, երկար ժամանակ թույլ չէին տալիս աշխատելու ԵՊՀամալսարանում՝ ամեն օր գնում էր համալսարանի պատերը շոյում էր ու համբուրում և գալիս էր տուն (մայրս՝ տիկին Սոֆիկի քեռու թոռն է, այն քեռու, ով իր բակում ծառի տակ Հ. Աճառյանի ձեռագրերը փրկեց տես՝ «Օրհնվի էն ծառը» հոդվածը՝ Գրական թերթում, ծառը չջրվեց չորացավ նրա բանտարկության՝ այդ 18 ամիսների ընթացքում, բայց այսօր մենք Արմատական բառարանը ու էլի շատ աճառյանական ձեռագրերը ունենք): Տես՝ նաև Հ. Աճառյանի Հուշերը գրքում:

Ես «պտույտ մը գործեցի» կոնսերվատորիայի աջ թևի միջանցքներով, լուսանկարում էի լսարանները, մեր մեծերի հետքերով, միջանցքում հանդիպեցի դաշնակահար երիտասարդ-պրոֆեսորներին խնդրեցի, որ իրենց էլ նկարեմ, որ կենդանի շուշը զգացվի: Արտասվեցին առաջարկիցս, առաջին նկարում երկուսի աչքերն էլ փակ են ստացվել երկրորդ անգամ նկարեցի Նաիրա Հակոբյանին և Նարինե Խաչատրյանին՝ տես՝ նախորդ էջում:

Մեր կոնսերվատորիայում դիմաստիաներով՝ այսինքն գեղաստաններով են սովորում, ժառանգականության փաստը կա, ի՞նչ եք անելու այդ ավանդուքի հետ, որ պատերն են հուշում, ինչպես կարելի է մորակառույց եկեղեցին համեմատել հազարավոր դարերի պատմություն ունեցող հրաշքներով լեցուն քարակերտ եկեղեցու հետ:

Հենց այդ պահին նկարում Նաիրա Հակոբյանի դուստրը՝ 3-րդ կուրսի ուսանողի Լաուրա Ասատրյանը սովորում է դաշնամուրային բաժնում, պրոֆեսոր Աննա Խաչատրյանի՝ Հայկանուշ Դանիելյանի թոռնուհու, Միքայել Խաչատրյանի (ով իմ պապիկի եղբոր՝ Գուգուշ Թառայանի՝ Կոնսերվատորիայի փողային ամբիոնի հիմնադիրն է եղել, ուսանողն էր) և դստեր՝ անվանի պրոֆեսոր, կոնցերտմայստեր Մարիաննա Հարությունյանի դասարանում: Դե ասեք սա հայրական տանից զրկել չի՞՝ նշանակում:

Իմաստում խմբագիր Հովհաննես Մուրադյանն ասում էր. «Սա մեր երկրորդ տունն է» և աշխատասենյակում նստած դիմացի մարդը իր հարազատ մարդկանցից պետք է լիներ և նաև կողքի սեղանի շուրջ նստող անձնավորությունը:

Այսօրվա կոնսերվատորիայում արդեն լեզենդներ են ապրում ու աշխատում Սերգեյ Գեորգիի Սարաջյան իր հոր Գեորգի Վարդի Սարաջի դասարանում նաև գավակները՝ Աննան և Գեորգին այդ նույն դասարանի և շկոլայի շարունակողները:

Մեր երաժշտագետներիս համար շատ պաշտելի ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և սոցիոլոգիայի ինստիտուտը, որտեղ մեր միմիմում քննություններն ենք հանձնում և տեղակայված է մեր կոնսերվատորիայի 1-ին Ռոմանոս Մելիքյանի ստեղծած շենքում: Այդ օպտիմալացումը 45 բուհերի և ինստիտուտների համարում են հարձակում մեր ազգի մտավորականության և երիտասարդության՝ մեր ապագայի վրա: Սա մշակութային արվեստի և գիտության Գագիկ Գինուսյանի ասած «Հայու տեսակի» Ցեղասպանություն է, որ ավելի վատ երևույթ է:

ԳՐԱՐ ՀԱԳՈՅԱՆ



Տաժանակիր աշխատանքի ընթացքում ստեղծվեց մի ունիկալ կրթական համակարգ, որը ներառում էր իր մեջ բոլոր դպրոցների լավագույն ավանդույթները: Մենք այսօր բոլորս դրանց կրողն ենք, մեր երեխաներին այսօր դա ենք փոխանցում, ինչպե՞ս կարելի է փուլզել նման ձևակառույցի կրթական համակարգ:

Մի դասարանում երկար տարիներ պարապել է Գոհար Գասպարյանը, մյուս տեղում՝ Տաթևիկ Սազանդարյանը, մյուսում՝ Արշավիր Կարապետյանը, մյուս տեղում, ասենք՝ Վիլի Մոկացյանն... այսինքն մեր բոլոր մեծագույն երաժիշտներն ունեցել են իրենց դասարանները՝ օդն է այնտեղ այդ մարդկանցով պարուրված... առուան է կոնսերվատորիայի մեծերով համեմված: Ու մեր ուսանողների համար մեծ պարտավորվածություն է մտնել այդ լսարանն ու կարողանալ այդ լսարանի պատիվն ու այդ երաժշտի ավանդույթները շարունակել:

ՄԵՐԱ ՇԵՅՐԱՆՅԱՆ
Երաժշտագետ,
ԵՊԿ երաժշտության պատմության ամբիոնի դասախոս

Արվեստագետների գիրքորոշումներն արվեստի բուհերի միավորման եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ապագա ակադեմիական ֆաղափ մաս դարձնելու, սեղափոխելու վերաբերյալ



**ԵՊԿ
Ուսանողական
Խորհուրդ/ YSC
Student Council**

ՀԱՐԳԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Տեղեկացնում ենք, որ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Yerevan Komitas State Conservatory (այսուհետև նաև՝ ԵՊԿ կամ Կոնսերվատորիա) պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ, վարչական, ուսանողական կազմերի և շրջանավարտների դիմում-պահանջը և դրա հիման վրա ԵՊԿ ուսխորհրդի կողմից կազմակերպված ստորագրահավաքի արդյունքները ներկայացվեցին Կոնսերվատորիայի Լիազոր մարմնին՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարություն: Հիշեցնենք, որ դիմում-պահանջը ձևակերպվել է ս/թ մարտի 12-ին տեղի ունեցած համակոնսերվատորիական ժողովում, որում մասնավորապես ասվում է:

«Մենք, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոսներս, ուսումնաօժանդակ և վարչական կազմերի անդամներս, ուսանողներս և շրջանավարտներս, կտրականապես դեմ ենք Կոնսերվատորիան որևէ այլ բուհի հետ միավորելուն, ներկայիս շենքից Կոնսերվատորիայի տեղափոխվելուն, «Ակադեմիական քաղաք» նախագծի մաս կազմելուն»:

Դիմում ենք ԵՊԿ Լիազոր մարմնին, պահանջելով Հայաստանի Հանրապետության միակ երաժշտական բուհը՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան չներառել «Ակադեմիական քաղաք» նախագծում, պահպանել բուհի կարգավիճակը և ինքնավարությունը՝ իր ներկայիս պատմական շենքում»:

Կից ներկայացրել ենք նաև մեր դիրքորոշման հիմնավորումները:

Ստորագրահավաքին առցանց ձևաչափով մասնակցել են ԵՊԿ արտերկրի շրջանավարտներ: Ստորագրահավաքին ինքնաբերական կերպով միացել են ՀՀ քաղաքացիներ և սփյուռքահայեր, այդ թվում նաև, առցանց ձևաչափով: Ստորագրահավաքը սկսվել է ս/թ մարտի 13-ին և ավարտվել մարտի 25-ին:

Առկա է 6290 վավեր ստորագրություն:

Ակնկալում ենք Լիազոր մարմնի պատասխանը օրենքով սահմանված ժամկետում:

Սիրով՝ ԵՊԿ ուսխորհուրդ



Գերմանիա «Կարլսբուրգ» քաղաքի կոնսերվատորիա: Հետաքրքիր է, որ ես գերմանացիների մտքով չի անցնում տեղափոխել կոնսերվատորիան քաղաքից դուրս, չեն ֆայնում: Պետք է զլխի գցել:

<https://www.facebook.com/photo/?fbid=2380743735444256&set=pcb.2380743775444252>

Սա չհասկացող մարդու նախաձեռնություն է: Կոնսերվատորիան այն բուհը չէ, որ կարելի է միացնել ուրիշներին կամ



տանել քաղաքից դուրս: Ես դեմ եմ այդ մտածելակերպին և կարծում եմ, որ սթափ մտածելակերպը կօգնի հրաժարվել այդ գաղափարից:

Կառավարությունը հատկացրեց վայրն ու կառուցեց ներկայիս կոնսերվատորիայի շենքը՝ հաշվի առնելով նրա աշխարհագրական դիրքը, հասանելիությունը, հնարավորությունը չփվելու մնացած երաժշտական կենտրոնների հետ: Հիմա այդ շենքն ի՞նչ պետք է դառնա, ես չգիտեմ: Չնայած՝ կասկածներ կան, որոնք ես հիմա չեմ ուզում բարձրաձայնել, որովհետև համոզված չեմ: Ոչ ոքի թույլ չեմ տալիս գնալ, որտեղ վերանորոգում է, բայց ինքը՝ երևույթն անհեթեթություն է: Պատկերացրեք Մոսկվայի կամ Փարիզի կոնսերվատորիան հանեն, քաղաքից տանեն հեռու մի վայր:

Ցանկացած երկրում այսպիսի որոշումը ծիծաղ կառաջացներ, կանցներ, կգնար: Բավական է, որ մեր հայ կատարողները՝ այն երաժիշտները, որոնք գտնվում են արտասահմանում, որոնցից ամեն մեկը ներկայացնում է հայ կատարողական երաժշտական արվեստն արտերկրում, ծայր բարձրացնի, մի նախադասություն գրի, սա կլինի աշխարհով մեկ խայտառակություն այս կառավարության և, առաջին հերթին՝ այդ որոշումը կայացնողների համար: Նման որոշումներ կայացնելուց առաջ՝ նախեառաջ հարկավոր է այս հանգամանքն էլ նկատի ունենալ...

ՄԱՐՏԻՆ ՎԱՐԴԱՋԱՐՅԱՆ
ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր,
Երևանի պատվավոր քաղաքացի

«Կոնսերվատորիան տեղափոխելու որոշումը ճիշտ չէ...

Ձարգացած երկրներում քաղաքի կենտրոնից հանում են տարբեր գերատեսչությունները, տեղափոխում այլ վայր,



թեկուզ այլ երկրների Ակադեմիական քաղաքներում տեղակայվում են տարբեր բուհեր, բայց քաղաքի կենտրոնում շարունակում են մնալ մշակութային հաստատությունները:

Եթե մենք ուզում ենք ունենալ որակյալ և բոլոր պահանջներին համապատասխան կրթական քաղաք, մեզինից կպահանջվի 15 տարի:

Դասախոսները այդ հաստատություններում հենց պրակտիկ մասնագետներ են՝ աշխատում են կամ թատրոնում, կամ մշակութային այլ միջավայրում: Միայն նրանք կարող են մասնագիտական կրթություն տալ ուսանողներին: Եթե տեղափոխվեն այլ վայր, կհրաժարվեն դասախոսական աշխատանքից, կընտրեն իրենց մասնագիտական աշխատանքին ավելի մոտ լինելու հանգամանքը:

Այդ պարագայում նրանց փոխարեն կդասավանդեն ոչ մասնագետները կամ էլ՝ ոչնչի չհասած անձնավորությունները»:

Աղբյուր՝ armtimes.com

ՌՈՒԲԵՆ ԲԱԲԱՅԱՆ
Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի գեղարվեստական ղեկավար
<https://www.facebook.com/photo/?fbid=934989958626112&set=a.915832063875235>



Պարոն Երզնկյան, Դուք դասավանդում եք Երևանի պետական կոնսերվատորիայում: Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը՝ Երևանի պետական կոնսերվատորիան «Ակադեմիական քաղաք» տեղափոխելու վերաբերյալ:

- Ես կտրականապես դեմ եմ, որովհետև անհնարին է Երևանի պետական կոնսերվատորիան ուրիշ տեղ տեղափոխելը: Կոնսերվատորիան հենց իր տեղում էլ գտնվում է, և կարծում եմ՝ հարկ չկա ուրիշ տեղ տեղափոխելու:

- Կոնսերվատորիայում կան նաև արժեքավոր երաժշտական գործիքներ, չե՞ք կարծում, որ տեղափոխությունից կարող են վնասվել:

- Դրանք մանրուքներ են: Կարևորը երաժշտական գործիքները չեն: Ամենակարևորը մարդիկ են, որոնք սովորում և դասավանդում են այդ բուհում: Կոնսերվատորիան կառուցված է այն վայրում, որտեղ Օպերայի և բալետի պետական շենքն է, Հայաստանի պետական ֆիլիարմոնիան է, երաժշտական դպրոցներն են: Մեր քաղաքի կենտրոնական հատվածում են գտնվում բոլոր բուհերը: Եվ կենտրոնն ինքնին արդեն բուհական քաղաք է: Դասախոսներն աշխատում են և ֆիլիարմոնիայում, և դպրոցներում, և բուհերում: Ես, օրինակ, աշխատում եմ կոնսերվատորիայում: Եթե տեղափոխվի այդ ամենն ուրիշ տեղ, ամեն ինչ կքանդվի: Դասախոսները կդժվարանան գնալ աշխատանքի: Եվ իրենց տեղը կաշխատեն ավելի ցածրամակարդակ դասախոսներ:

- Կոնսերվատորիայի շենքը նաև ունի մշակութային արժեք: Ի՞նչ կասեք այդ մասին:


- Իհարկե, մշակութային արժեք ունեցող շենք է: Նախկինում կոնսերվատորիան ուրիշ վայրում էր գտնվում, հետո բերեցին ներկայիս տեղը, որն ավելի կենտրոնում է, ավելի է համապատասխանում դասավանդման պրոցեսին և ավելի մեծ է: Կարծում եմ, որ իդեալական շենք է, որը կարելի էր ավելի սիրունացնել, կահավորել...

ԵՐՎԱՆԴ ԵՐԶՆԿՅԱՆ
ՀՀ ժողովրդական արտիստ,
Երևանի պատվավոր քաղաքացի,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
պրոֆեսոր և քաղ-փողի ամբիոնի և բաժնի հիմնադիր-
ամբիոնի վարիչ (1998-2018 թթ.)

«Կոմիտասի անվան կոն-

սերվատորիայի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության միասնականությունը ցույց տվեց «պատգամաբեր» կառավարության չինովնիկին, որ Հայաստանում ծնունդ առավ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՃԱԿԱՏ:

Տեսնենք, մնացած բուհերը կկարողանա՞ն նույնչափ պահել սեփական Alma Mater-ների ՊԱՏԻՎԸ»



ՎԱՐՄԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
երգիչ, կոմպոզիտոր, ռադիոլրագրող

«Բուհը չտեղափոխելու համար պատրաստ ենք ցանկացած քայլի»

Կոնսերվատորիայում դիմում են պատրաստում

Հայ դասական երաժշտության հիմնադիր Կոմիտասի անունը կրող Կոնսերվատորիան ստեղծվել է 1921 թվականին: <,,> Գիտական, մշակութային ամբողջն ներուժն իր մեջ կրող շենքը կարող է այլևս որպես բուհ չծառայել, քանի որ

Արվեստագետների դիրֆորոշումներն արվեստի բուհերի միավորման եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ապագա ակադեմիական ֆազաֆի մաս դարչնելու, ճեղափոխելու վերաբերյալ

կառավարությունը որոշել է համալսարանները միավորել մեկ տարածքում: Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոսները, ուսանողներն ու երաժշտական հանրույթը դեմ են, որ կոնսերվատորիան բուհերի միավորման ծրագրով «Ակադեմիական քաղաքի» մաս դառնա և, ըստ նախագծի, Երևանի Կենտրոնից տեղափոխվի 17-րդ թաղամասի տարածք: Նրանք համախմբվել են «Կոնսերվատորիայի միասնական շարժում»՝ նախաձեռնության շուրջ և հայտարարում են, որ բուհը «չի՝ տեղափոխվելու, չի՝ միանալու այլ բուհի և «Ակադեմիական քաղաքի» մաս չի կազմելու»: Կոնսերվատորիայի միասնական շարժման մասնակից Նարեկ Խառատյանը սովորում է Կոնսերվատորիայում, 4-րդ կուսի ուսանող է՝ *Armenia Today*-ին պատմել է նախաձեռնության նպատակների մասին: Ասում է. «բուհը պաշտպանելու համար պատրաստ են ցանկացած քայլի»: *.Տեղեկություն տարածվեց այն մասին, որ Կոնսերվատորիան տեղափոխվելու է «Ակադեմիական քաղաք»:* Տեղի ունեցավ համակոնսերվատորիական մեծ ժողով, որին ներկա էին բոլոր ուսանողներն, դասախոսները, ռեկտորն ու պրոֆեսորները: Մենք միահամուռ արտահայտեցինք մեր կարծիքը, ըստ որի՝ Կոնսերվատորիան պետք է իր տեղում մնա: Սա նախաձեռնություն է պահպանելու, պաշտպանելու մեր Կոնսերվատորիան, մեր ավանդույթները, մեր երաժշտությունը», - նշել է Խառատյանը: Նախաձեռնության անդամները բուհը չտեղափոխելու պահանջով կոնսերվատորիայում մարտի 13-ից եռօրյա ստորագրահավաք էին իրականացրել: «<,> պատրաստվում են ստորագրությունների հիման վրա դիմում ուղարկել ԿԳՄՍ նախարարություն: Խառատյանը հայտնել է, որ առցանց տարբերակով ստորագրահավաքը շարունակվելու է մինչև մարտի 25-ը: Այս պահի դրությամբ՝ *change.org* կայքում ավելի քան 3000 ստորագրություն է հավաքվել: Նա նշել է, որ ուսանողների, դասախոսների ու շրջանավարտների աղմուկից հետո բուհի ղեկավարության և ԿԳՄՍ նախարարության միջև քննարկումներ են սկսվել: «Սպասում ենք այդ քննարկումների և ստորագրահավաքի արդյունքներին, ըստ որի կորոշենք մեր հետագա քայլերը: Այս պահին ընտրված է այս մեթոդը, բայց երաժշտական հանրույթը մաս այլ քայլերի է պատրաստ», - հավելել է նա, - Ցանկացած օրենք կարող է վերանայվել, նկատել է Խառատյանը: Անկնաքանդելով մարտի 14-ին ԿԳՄՍ նախարար ժամնա Սեդրեասյանի այն հայտարարությունը, թե բուհերի օպտիմալացման ծրագիրն օրենք է: «Այս օրենքը վերանայման կարիք ունի. Կոնսերվատորիան չպետք է լինի «Ակադեմիական քաղաքում»: Իր երկարամյա գործունեությամբ, շրջանավարտների քանակով, որոնց թվում կան բազմաթիվ աշխարհահռչակ երաժիշտներ, վաղուց ապացուցել է իր արդյունավետությունն ու մրցունակությունը ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս», - ընդգծել է նաև Խառատյանը համոզված է՝ - «Կոնսերվատորիան յուրօրինակ համակարգ է, որը խափտելով քանդվելու է երաժշտական հանրույթին ու ավանդույթները կապող օղակը: Նա նշել է, որ Սփյուռքի աշխարհահռչակ երաժիշտները ևս ստար են կանգնել համակոնսերվատորիական շարժմանը: Կոնսերվատորիայում համոզված են՝ իրենց ծայրը լսելի է ամբողջ աշխարհում: Վստահ են՝ երաժիշտների եզակի համախմբվածությունը բուհը չտեղափոխելու իրենց նպատակի իրականացման կարևոր նախապայմաններից է: Մանրամասները՝ տես՝ տեսանյութում:

ԱՆՆԱ ԲԱՂԱՅԱՆ
Armenia Today
<https://armeniatoday.news/hy/society/727165/>

Մյուսը հրատարակում ենք կրճատումներով կրկնություններից խուսափելու համար

Պետությունը և մայրաքաղաքը ներկայացնող մշակույթն է... Եթե մի բուհ կրում է կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտասի անունը, դա արդեն իսկ թելադրում է խորագույն հարգանք նրա նկատմամբ... Աղբյուրը *Factor.am*

Հայաստանի միակ մասնագիտական երաժշտական բարձրագույն հաստատության Կոնսերվատորիայի ապագան դեռևս պարզորոշ չէ:

Կոնսերվատորիան Թատերական ինստիտուտի, Գեղարվեստի ակադեմիայի, մի քանի մշակութային կառույցների հետ միասին հայտնվել է «Ակադեմիական քաղաքի» մշակույթի կլաստերում՝ ներառվելու հարցի առաջ՝ ԿԳՄՍ նախարարությունից հայտնում են՝ շրջանառվող լուրերը, թե Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան փակվում է, ուռճացված են: Նշում են, որ բուհը փակվելու նպատակ չունեն, «Ակադեմիական քաղաք» են կառուցում: «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը բուհերին է ուղարկել խոշորացման և ինտեգրման գործընթացի շրջանակում ձևավորվող աշխատանքային խմբերի կազմը: Աշխատանքային խմբերի բաժանումից արդեն իսկ եմբարդվում է, թե

որ բուհը որին է միանալու: Սա է, թերևս, նոր անհանգստության պատճառ դարձել Կոնսերվատորիայում: Այն առաջին բուհերից մեկն է, որ դեմ է բուհերի միավորման կառավարության նախաձեռնությանը: Բուհի գիտխորհուրդն անհամաձայնության հիմնավորումներն ու առաջարկներն է ներկայացրել նախագծի մասին: Factor TV-ի տաղավարում այս թեմայով հրավիրված քննարկմանը մասնակցում են Մարգարիտա Սարգսյանը՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, դաշնակահար, Ռուբեն Բաբայանը՝ ռեժիսոր, Ջարուհի Հովհաննիսյանը՝ իրավապաշտպան, ջութակահար, Արսեն Գրիգորյանը՝ երգիչ, Հայաստանի վաստակավոր արտիստ, Ատոմ Մխիթարյանը՝ կրթության փորձագետ:

Մանրամասները՝ տեսանյութում:

ՌՈՐԵՐՏ ԱՆԱՆՅԱՆ
Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով
https://factor.am/752130.html?fbclid=IwZXh0bgNhZW0CMTEAAR0lGnSW0jQBM6HW-tfGp93Q4-2h5gAHrymy1TPRjKCpZi8BRFk13Nn9E_aem_AXxp_dPYMeUt7iQrIY69zOpp_e1qpy_uObOP0c5DvO5prOvCvZIVa-TVoCkTfXY5scdqoGYqrOrKlVtm6bQYVyiB_.factor.am

Կոնսերվատորիայի ղեկավարությունը կիսում է երաժշտական համայնքի վրդովմունքը Կոնսերվատորիայի ապագայի վերաբերյալ. հայտարարություն

Կոնսերվատորիայի ղեկավարությունն արվեստի ԲՈՒՀ-երի միավորման հարցի շուրջ իր կարծիքն ու դիրքորոշումը գրավոր ներկայացրել է ԿԳՄՍ նախարարին դեռևս անցյալ տարի: Այն ներկայացված է նաև ռազմավարության մշակման համձնախմբին և գիտկոմի նախագահին:

Այս մասին ԵՊԿ ռեկտորատը հայտարարություն է տարածել:

«ԵՊԿ ռեկտոր Սոնա Հովհաննիսյանն իր և ԲՈՒՀ-ի ղեկավար կազմի դիրքորոշումը հրապարակել է ԵՊԿ գիտական խորհրդի փետրվարյան նիստի ժամանակ: Հանգամանորեն ներկայացվել են այս նախագծի հետ ԲՈՒՀ-ի անհամաձայնության հիմնավորումներն ու առաջարկները: Մարտի 6-ի Ռեկտորատի նիստի ժամանակ, ևս մեկ անգամ խնդրվել է ղեկանների և ամբիոնի վարիչներ միջոցով Կոնսերվատորիայի դասախոսական կազմին տեղեկացնել ԲՈՒՀ-ի պաշտոնական դիրքորոշման մասին:


ԵՊԿ ղեկավարությունը հասկանում և կիսում է երաժշտական համայնքի վրդովմունքն ու անկեղծ մտահոգությունները ՀՀ միակ մասնագիտական երաժշտական բարձրագույն հաստատության ապագայի վերաբերյալ:

Այս հարցի լուծումը հնարավոր է միայն մեր միասնական վերաբերմունքը կշռադատված, հիմնավոր և հարգալից ներկայացնելու դեպքում», - նշված է հայտարարության մեջ:

https://www.tert.am/am/news/2024/03/11/conservatory/4091170?fbclid=IwZXh0bgNhZW0CMTEAAR0f4oXCMY5TmBITqFPcNFf1-ZKctY5loeG-0ksV_adfDWol65pzOCGk7E0_aem_AXyKIRH1p4SuSjHCwSyHqTKsCpZhYk0MC32RHCVJV0ajU6F1-H2ZIC2The4ICBu5kNXSGMHnRW5fhB2IUZAsgzjb

«Յուրաքանչյուր մեր կյանքի բարձրունքն՝ Արարատն ունենք թե բարոյական և թե կենսագրությամբ և թե արժեհամակարգով և թե գործերով». - դե գնահատիր ինքդ քեզ տես Արարատի բարձրունքին հասել՝ ես կամ, որ հատվածում ես».

Panorama16:50 27/04/2024 ՀԱՅԱՍՏԱՆ



ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյան

Արարատ լեռը ողջ քրիստոնյա աշխարհն է ընդունել որպես հայերի սրբազան պատմության մաս. Պրոֆեսոր

«Յուրաքանչյուր ժողովուրդ ազատ է իր խորհրդանշաններն ընտրելու հարցում՝ անկախ այն բանից ունի քաղաքական կազմակերպված հանրույթ, թե ոչ, պետություն է, թե՝ էթնիկ խումբ».

- այս մասին *Panorama.am*-ի հետ զրույցում ասաց ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը, անդրադառնալով Ալիկ օրենս հնչեցրած հայտարարություններին:

Հիշեցնենք, որ Ադրբեջանի նախագահը, Ելույթ ունենալով «COP29 և կանաչ տեսլական Ադրբեջանի համար» թեմայով միջազգային ֆորումում, ասել է, որ Հայաստանի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման նախապայմաններից են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունն ու Հայաստանի զինանշանից Արարատ լեռան փոփոխությունը: «Հայաստանում նրանք շատ լեռ ունեն, եթե ուզում են, թող ընտրեն մեկ ուրիշը»:

Պրոֆեսորի խոսքը՝ «խորհրդանշանները պատմության ամփոփումն են, ինքնուրույն արտահայտումն ու խորհրդանշանը»:

«Այսօր իրավիճակը փոխվել է, տեղի են ունենում աշխարհաքաղաքական փոփոխություններ և առկա է պարտադրանք՝ արտաքին ուժերի կողմից: Չեմ կարծում, թե Արարատ լեռան Հայաստանի զինանշանի վրա լինելու խնդիրը որևէ առնչություն ունի Հայաստանի ներկա պետության որևէ հավակնության հետ: Թշնամին հաղթել է, հանրույթը ռազմականորեն թույլ է, իսկ աշխարհը, որը կարող էր աջակցել, անտարբեր է: Արդյունքում Ադրբեջանը, Թուրքիայի հետ համատեղ կամ նրա թելադրանքով, փորձում է պարտադրել փոփոխություններ Հայաստանի ներքին կյանքում», - ասաց Պետրոսյանն ու հավելեց. «Ակադեմիական կամ կամ միջազգային իրավունքի խնդիր չէ, զուտ քաղաքական ընդգծված ճնշում է հակառակորդի կողմից, որն անընդհատ սպառնում է զանազան պատժամիջոցներով, պատերազմով և այլն:

Ոչ թե որպես հետազոտող, այլ որպես Հայաստանի քաղաքացի կարծում եմ, որ սա զուտ ֆիզիկական, ռազմական ճնշում է Հայաստանի վրա և վաղը, մյուս օրը կարող են շատ ավելի անհեթեթ պայմաններ առաջադրվել: Դրա հիմնական նպատակը հետևյալն է՝ «այն, ինչ եղել է անցյալում, գոյություն չունի և անցյալը պետք է վերաարբարել», ելնելով Հայաստանի մեթոդյա ծանր իրավիճակից: Սա բռնություն է, ճնշում, միջազգային ցանկացած ինքնիշխան պետության հանդեպ անընդունելի գործելակերպ: Մերօրյա քաղաքական իրավիճակը փորձում են տարածել պատմության և ինքնության վրա, ինչը մարդու իրավունքների տեսակետից միանգամայն անընդունելի է, նաև ժողովուրդների ինքնորոշման իրավունքի տեսակետից: Պարզ է՝ չկա իրավական և բարոյական որևէ հիմք, կա զուտ բռնի, կոպիտ քաղաքական ճնշում», - ասաց նա:

Այն, ինչը փաստ է, ապացուցման կարիք չունի: Հետազոտողը նշում է՝ Արարատ լեռը հայի ինքնության խորհրդանիշն է և հիմա փորձ է արվում ջնջել այն:

«Արարատն այն եզակի խորհրդանշանն է, որը ոչ միայն հայերն են համարում իրենց, Հայաստանի պատմությունն ու ապագան խորհրդանշող, այլև ամբողջ աշխարհը: Մոտավորապես XIII դարից սկսած եվրոպական ճանապարհորդներն անընդհատ պատմություններ են տարել Եվրոպա ներկայացնելով, որ Արարատ լեռը, որի վրա իջել է Նոյան տապանը գտնվում է Հայաստանում: Նույնիսկ ամենավաղ քարտեզանման պատկերներում, սկսած VIII դարից, երբ խոսք էր գնում կորուսյալ դրախտի կամ դրախտը ոռոգող չորս գետերի ու Նոյան տապանի մասին, Հայաստանն առանձնացվում էր կորուսյալ դրախտի նախահայրենիք, որպես Նոյի տապանի իջման վայր: Սա այն եզակի դեպքն է, երբ ոչ միայն հայերն են ստեղծել իրենց երկրի համար խորհրդանիշ, այլ ամբողջ քրիստոնյա աշխարհն է ընդունել որպես սրբազան պատմության մի մաս: Սկսած XIII դարից մեկ անգամ չէ, որ Արարատ լեռը մույնացվել է հայերի հետ, դա ռեալ է, իրական է նաև մեր օրերում: Կան բազմաթիվ հետազոտություններ «Լերադարձ դեպի Արարատի երկիր», «Արարատի պատմությունը», որոնց տակ ժամանակակից հետազոտողները նկատի են ունենում Հայաստանը, ոչ թե Հայաստանի հանրապետության ներկայիս սահմաններն, այլև Հայաստանը որպես քաղաքակրթական ֆենոմեն», - ամփոփեց Համլետ Պետրոսյանը:

Ավելի մանրամասն՝ հղմամբ.
https://www.panorama.am/am/news/2024/04/27/%D5%80%D5%A1%D5%B4%D5%AC%D5%A5%D5%BF-%D5%8A%D5%A5%D5%BF%D6%80%D5%B8%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6/2995621?fbclid=IwZXh0bgNhZW0CMTEAAR0vob6tc0VDSdlwyQ12rMxtitlY07JiiWtaykx0T1XhD-xLb2JXlv7-sLw_aem_AenWs2PY0JbAJtBfvntK_VRveeDEerAI8ZWdifV84afibwyqtoIfJN8p-ZSOBL8n1coMJ3B0rOzVsVCo-ISYEoiYO

Երգչախմբային թասրոնի նվիրվածները




Կոմպոզիտոր, խմբավար, դասախոս, մանկավարժ
ԱՆՆԱ ԱԶԻԶՅԱՆԻՆ
նվիրված համերգ

Կան մարդիկ, որոնց կորուստներն անդառնալի են և նրանք իրենց վառ, ամենացորդ, համեստ, առաքինի, Աննայի դեպքում բառիս բուն հոգևոր՝ և՛ մշակութային լայն, և՛ եկեղեցական երաժշտությանը ծառայելու իմաստով համատեղելի է, անփոխարինելի են: Իրենց տեսակը այնքան բարեհունց էր բնավորության, տաղանդի և գործունեության հետ, որ անկրկնելի է և փնտրվելի: «ՀՈՎԵՐԻ» և հիմնադիր-գեղարվեստական ղեկավար, պրոֆեսոր ՀՀ վաստակավոր գործիչ Սոնա Հովհաննիսյանի կողմից կազմակերպվող երկրորդ համերգն է, որ նվիրվում է Աննա Ազիզյանի խմբերգերին, և, եթե առաջին համերգում այլ ստեղծագործությունների թվում էր հնչում նրա գողտրիկ, բայց հոգեցունց գործերը, ապա երկրորդ համերգն ամբողջությամբ նվիրված էր նրա հեղինակային ստեղծագործություններին:

Մեջբերենք երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, Աննայի հարազատ ընկերուհու, նաև գործընկերոջ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ, կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ՝ Լիլիթ Կառլենի եփրեմյանի արձագանքն Աննա Ազիզյանի հեղինակային «Մեզ ծանոթ և անծանոթ Աննան» խորագրով համերգից:

Լույս է տեսել ԵՊԿ պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր Միեր Նավոյանի հայ երաժշտագիտության հիմնարար ուսումնասիրությունը՝ «Հայ հիմներգության ձևավորումը. քննական տեսություն» աշխատությունը, որ հրատարակել է Կոմիտասի թանգարան-ինստիտուտը՝ ՀՀ ԳԱԱ Ար-



վեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Հայ հոգևոր ինքնության սահմանների ճշգրտումները նույնքան հրատապ ու կարևոր են այսօր, ինչպես Կոմիտասի, Ք. Ս. Քուլնարյանի, Ն. Կ.

«Եզակի, Անմոռանալի, Ինչ-որ չափով նույնիսկ ՊԱՏՄԱԿԱՆ համերգ կայացավ այսօր, որը պարզևեց հանդիսատեսին Հոգու ցնծություն, Մահը հաղթելու երջանկություն, Ազգային ավանդապաշտության սահմաններում բացարձակ ազատության հայտնաբերում (ֆորմատի դուրս), Հայ մարդու հոգեկերտման բոլորովին նոր՝ ծանոթ-անծանոթ ալգորիթմների բացահայտում, որից հետո ինքներս մեզ

ճանաչեցինք ՆՈՐՈՎԻ: Ու կարծես հայ երգչախմբային արվեստի ինքնատիպ նոր էջ բացվեց մեր առջև:

Իսկ ավելի պարզ՝ Աննա Ազիզյանի ակնթարթային կյանքի կոմպոզիտորական սխրանքը կատարյալ կերպով բացահայտեց բարձրարվեստ, անգերազանցելի նրբագեղ երաժիշտ Սոնա Հովհաննիսյանը՝ իր ՀՈՎԵՐ նվիրական երգչախմբի յուրաքանչյուր երգչի ամբողջ արտիստիկ ելույթն մարմնավորմամբ:

Իրականում ԳԵՂԵՑԻԿ մարդկանց հոգու և մարմնի ներկայացման էինք մերկա դաշիճում: ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ ժանրի ակունքներում կանգնած Ազիզյան-Հովհաննիսյան ընկերական և ստեղծագործական միասնությունը շարունակում է գործել՝ ի հեճուկս ծակատազրի դաժան հաղթանակներ» (https://www.facebook.com/story.php?story_fbid=7309715019125532&id=100002613204024):

Գործընկերոջս արվեստին և գործին հետամուտ՝ երաժշտագետ և հրատարակիչ, ժուռնալիստների միջազգային ֆեդերեցիայի անդամ
ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ

«Դեռևս մեկ դար առաջ Սպենդիարյանն ասչամբ օրվել էր երիտասարդ երաժիշտներիս քայահայտելու առաքնությանը». Սուսաները թանգարանում

Ա. Սպենդիարյանի տուն-թանգարան



Մարինե Օթարյանը, Կարինե Հարությունյանը, Սոնիկա Պետրոսյանը և փառատոնի մասնակից պատանի երաժիշտները

2016 թվականից անցկացվող այս փառատոնը բացահայտել ու աշխարհին է ներկայացրել բազում տաղանդավոր երիտասարդների տարբեր երկրներից: Հայաստանի փոքրիկ երաժիշտները մշտապես եղել են այս փառատոնի մասնակիցները և աշխարհին ներկայացրել ոչ միայն դասական, այլև հայ ազգային նվագարանները: *MUSE* մշակութային միավորման, Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի և Ա. Հեքիմյանի անվ. երաժշտական դպրոցի համագործակցությամբ կազմակերպված այս համերգաշարը կոմպոզիտորի հարկի տակ էր հավաքել պատանի երաժիշտներին: Նրանք հինգն էին՝ Եվա Ներսիսյան (ֆլեյտա), Միքայել Արաբյան (վոկալ), Լուիզա Մելքունյան (քանոն, սափ-թուր), Մարիա Ներսիսյան (դաշնամուր), Արիանա Ջարգարյան (վոկալ), որոնք փայլեցին իրենց կատարողական վարպետությամբ և հիացրեցին ունկնդրին: Հնչեցին Ի. Ալբերնիսի, Ս. Ռախմանինովի, Ա. Սպենդիարյանի, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի, Յ. Դոլիկովի և այլոց ստեղծագործությունները: Համերգի սկիզբն ազդարարվեց *MUSE Vienna* մեծ փառատոնի ավանդույթով՝ կազմակերպիչները վառեցին մոմը, որը միասնության, մեկ ընտանիքի մեջ լինելու խորհուրդն ուներ, իսկ համերգի ավարտին այն մարեցին մասնակից երաժիշտները՝ կրկին վառելու նախապայմանով:

Շնորհավորելով մասնակիցներին *MUSE* մշակութային միավորման ղեկավար Կարինե Հարությունյանը նշեց. «Ինձ համար կարևոր է, որ նախագիծը հնարավորինս շատ տաղանդավոր երեխաներ բացահայտի և այն դառնա ոգեշնչման և լույսի աղբյուր՝ նրանց հետագա ծանապարհին»: Իսկ Ա. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոցի տնօրեն՝ Սոնիկա Պետրոսյանը բարձր գնահատեց *MUSE Vienna* փառատոնի նշանակությունը տաղանդավոր հայ երեխաներին բացահայտելու և աշխարհին ներկայացնելու գործում: «Դեռևս մեկ դար առաջ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը կարևորում և անծամբ տրվել էր երիտասարդ երաժիշտներին բացահայտելու, նրանց համար ճանապարհի հարթելու առաքելությանը, ուստի այսօր նրա տանը նույն գաղափարին միտված այս նախաձեռնությունը պատահական չէ», - նշեց Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյանը: Կազմակերպիչների կողմից մասնակիցներին հանձնվեցին վկայականներ և նվերներ:

Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան
<https://www.aravot.am/2024/02/29/1403156/>

«ԵՐԱԺԻՇS» ամսաթերթի 2023 թ. տարեկան հաշվետվություն*

հազ. դրամ	
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից հասույթ (համախառն եկամուտ) ընդամենը	8.3
Այդ թվում եկամուտ՝ ամսաթերթի բաժանորդագրությունից, ամսաթերթի հատվածառից, գովազդից	8.3
Նվիրատվության մասնաբաժնի չափը	0
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից շահույթ (վնաս)	(14.2)

* Հրապարակվում է «Ջանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն:

ԼՐԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՑՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՆԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ

ՍԵՐԳԵՅ ՍՈՐԱՅԱՆ, ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱՌՈՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
խմբագիրներ՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ (հայ. լեզու)
ՍՈՖԱ ԱՋՆԱՌԻՅԱՆ (ռուս. լեզու)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՀԱՐ ՀՈՎՀՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համաձայն է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 16 էջ: Ստորագրված է 27.03.2024:
Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (<http://yksclabrarity.am/> conservatory.am): Այլ ՋԱՄներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը անբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչությանը» (<http://yksclabrarity.am/> conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմյանց հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունն նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
<http://www.conservatory.am>, <http://yksclabrarity.am/>
E-mail: yerazhisht@gmail.com
<https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/>

